141

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

ԱՓՀ
2859

*Ձեռագրի իրավունքով*

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՄԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐ

ԿՈՒՐՍ I 1931 թ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ XIX—XX ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 6106 (բ). Գուտիկ 40. Տիրաժ 1000

2857 - Ա9-2

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

# ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

## Բ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱՐԻՍՏՈԿՐԱՏԻԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

## (1789—1792)

Մենք արդեն պարզել ենք 1789 թ. Ֆրանսիական Մեծ Հեղափոխության պատճառները, բացատրելով, որ հեղափոխությունը հետևանք էր գյուղատնտեսության կապիտալիզացիային, առևտրի և արդյունաբերության զարգացումը խանգարող և կասեցնող կղերաֆեոդալական և ֆինանսարիստոկրատական փակարգերի գերիշխանության, կամ այլ կերպ ասած՝ արտադրողական ուժերի զարգացումը արգելակ էին դարձել գոյություն ունեցող արտադրական հարաբերությունները: Խանգարող և կասեցնող գործոնները Ֆրանսիայի բուրժուական սոցիալ-քաղաքական պայմաններում հնարավոր չէր խաղաղ ճանապարհով վերացնել: Գործող կառավարությունը և իշխող դասերը ոչ մի կերպ չէին համաձայնվում ընդառաջել բուրժուա դասի գոնե մինիմալ պահանջներին: Այս հողի վրա սրվում էր դասակարգային պայքարը և աստիճանաբար բարձրանում էին հեղափոխության ալիքները, մինչև որ հեղափոխությունը պայթեց 1789 թ., առաջին հերթին, մայրաքաղաքում՝ Փարիզում:

Ֆրանսիական հեղափոխությունը միմիայն տիպիկ ֆրանսիական չէր, նա նեղ ազգային շարժում չէր: Նման շարժումներ տեղի ունեցան Եվրոպայի համարյա բոլոր առաջնակարգ երկրներում, միմիայն մի տեղ ավելի հուժկու ու տևական, մի ուրիշ տեղ ավելի թույլ, մի տեղ ավելի շուտ սկսվեց, մի ուրիշ տեղ ավելի ուշ: Այդ բոլոր երկրներում էլ զարգանում էր կապիտալիստական արտադրությունը, բայց բոլոր տեղերում էլ նա իր զարգացման ճանապարհին հանդիպում էր մի շարք ընդդիմադիր, խանգարող ուժերի: Մի տեղ այդ ավելի ուժեղ էր արտահայտվում, մյուս տեղ ավելի թույլ, դրա համար էլ հեղափոխու-

թյունների ձևերը և ժամանակաշրջանները տարբեր էին, համապատասխան ամեն մի յերկրում գործող ուժերի ուղղության ու բնույթին: Այս յերևույթը միաժամանակ ցույց է տալիս, վոր XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին կապիտալիզմի զարգացումը կատարվում էր վոչ միաժամանակ ու միօրինակ: Գոյություն ունի կապիտալիզմի անհամաչափ զարգացումը, վորի անալիզը հենց, բացատրում է հեղափոխությունների տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով կատարվելու պատճառները:

XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում կատարված հեղափոխություններից ամենախորը և հուժկուն ֆրանսիականն էր: Այդ կարելի է բացատրել Ֆրանսիայում գոյություն ունեցող սոցիալական հակասությունների նույնպիսի խորությամբ, դասակարգային անտագոնիզմի ավելի սուր արտահայտությամբ, վորը Ֆրանսիայում ավելի հստակ էր հանդես գալիս, քան Յեվրոպայի մի այլ յերկրում:

Յեթե հեղափոխության պատճառները Ֆրանսիայում մենք գտնում ենք արտադրողական ուժերի և գոյություն ունեցող քաղաքական կարգի հակասությունների մեջ, ապա հեղափոխության առաջացման առիթները, մենք տեսնում ենք մինչև 1789 թ. Ֆրանսիայի ապրած մոտակա 10—20 տարվա դեպքերի առաջացման մեջ:

Ֆրանսիայի աշխատավոր մասսաները մինչև հեղափոխության սկիզբը անտանելի դրության մեջ ընկան: 1788թ.—1789 թ. ձմեռը շատ ծանր անցավ, այդ տարիները սովի տարիներ էին: Գյուղացիությունը և արհեստավոր-բանվորական մասսան տառապում էին սովից, սակայն պետությունը և տեղական վարչական մարմինները վոչինչ չարին առնել մի քիչ թեթևացնելու համար, ընդհակառակը ինքը վոչ մի պաշտպանություն չուներ, մինչդեռ սպեկուլյացիան ահռելի չափերի հասավ, հացավաճառները հացի գները բարձրացնում և մեծ գումարներ էին վաստակում: Սպեկուլյանտների, վաճառականների այս վերաբերմունքը, կառավարության թուլությունը և անկարողությունը մի վորևէ բան անելու և արտոնյալների անհաշտելի դիրքը ռեֆորմի հանդեպ մասսաների համբերության բաժակը լցրին: Մյուս կողմից, հեղափոխության նախընթաց տարիներում, կառավարությունը ֆինանսապես սնանկ դուրս յեկավ: Արտոնյալները վոչ մի դեպքում չէին ցանկանում ֆինանսական դրությունը բարվոքելու համար վորոշ զիջումներ կամ պահողություններ կատարել: Գյուղացիությունն անկարող էր հարկերը վճարել: Արդեն մի քանի տարվա հարկ գյուղացիությունը չէր վճարել, վորովհետև հետևանք նրա քայքայվածության ու աղքատության: Բուրժուազիան միայն



ի զորու էր ֆինանսական պրոբլեմը լուծել: Սակայն նա քաղաքական և տնտեսական ռեֆորմներ էր պահանջում:

Վորպեսզի կառավարությունը կարողանա ֆինանսական ճգնաժամը վերացնել, ստիպված էր արտոնյալ դասերի՝ ներկայացուցիչների խորհրդակցություն հրավիրել, այսինքն՝ նոտաբլներին: Խորհրդակցության ժամանակ պարզվեց, վոր ազնվականությունը և հոգևորականությունը չի ուզում հրաժարվել իր արտոնյալ իրավունքներից: Կառավարությունը պահանջեց հրաժարվել հարկային մի քանի թեթև արտոնություններից, ոգնել կառավարությանը, բայց արտոնյալները մերժեցին: Կառավարությունը յերկրորդ անգամ հրավիրեց նոտաբլներին, սակայն այս անգամ էլ հրաժարվեցին կառավարության առաջարկներից: Մինչդեռ յերկրի դրությունը բարդանում էր:

1770—ական թ. թ. վերջից սկսած մինչև հեղափոխության սկիզբը գյուղացիական և բանվորական շարժումները ավելի ուժեղացան: Հատկապես 1788—1789 թ. թ. խոշոր յելույթներ տեղի ունեցան թե քաղաքներում և թե գյուղերում: Այսպես՝ Փարիզի բանվորությունը 1789 թ. ապրիլին հեղափոխական դեպքերի նախօրյակին, հարձակվեց հարուստ գործարանատեր Ռևելյոնի գործարանի վրա և խորտակեց այն: Այդ յելույթի պատճառն այն էր, վոր Ռևելյոնը փորձեց բանվորների աշխատավարձը կրճատել, սակայն հետևանքը յեղավ գործարանի վոչնչացումը: Ավելի սպառնալից էին ագրարային շարժումները գյուղերում: Քաղցած գյուղացիությունը հարձակվում էր կալվածատերերի ապարանքների, պահեստների վրա, յեկեղեցական վանական կալվածքների վրա և հրդեհում, քայքայում ու թալանում էր:

Մյուս կողմից ուժեղացան ավազակությունը, բանդիտիզմը և հարձակումները անցորդների և ճանապարհորդների վրա: Քաղաքներում ուժեղանում էին բուրժուազիայի և ինտելիգենցիայի դժգոհության արտահայտությունները՝ ժողովները, հավաքույթները, բանավոր և գրավոր հարձակումները կառավարության վրա, մամուլի նույնպիսի կատաղի հարձակումները խորացնում էին մթնոլորտը: Հեղափոխության նախօրյակին մեծ քանակությամբ բրոշյուրային գրականություն հրատարակվեց և տարածվեց, հեղափոխական մասսան մեծ վոգևորությամբ կարդում էր այդ գրականությունը, վորտեղ գրում էին ժողովրդին հետաքրքրող բազմաթիվ հարցերի մասին՝ կառավարության, ազնվականների, հոգևորականների արարքների մասին, թագավորի և թագուհու մասին, նրանց կյանքի, վարք ու բարքի մասին, միաժամանակ առաջադրելով քաղաքական լոզունգներ, ծրագրեր և ապագայի հեռա-

նկարների մասին խորհուրդներ և միջոցներ: XVIII դարի լուսավորիչների աշխատությունները սկսեցին մեծ հետաքրքրությամբ կարդալ, նրանց մտքերը քննության առնել և զանազան նախագծեր կազմել: Կառավարությունը տեսնելով, վոր մի կողմից դեպքերը սպառնալից են դառնում և մյուս կողմից արտոնյալները չեն ուզում ընդառաջել նրան, ստիպված յեղավ դիմել յերրորդ դասին: Կառավարության այս քայլը ավելի սրեց իր հարաբերությունը հանդեպ արտոնյալների: Կառավարության տակտիկան առիթ տվեց խոշոր դժգոհությունների նաև հետագեմ պարլամենտներում, վորոնք սկսեցին ակտիվ ընդդիմություն հանդես բերել թագավորի կարգադրությունների հանդեպ և սոսկական ոպոզիցիոն դիրքը նրանց կողմից վերածվեց ակտիվ պայքարի թագավորի դեմ: Բուրժուազիան օգտվում եր այս դրությունից և ավելի յեր սրում դեպքերի զարգացումը: Այսպիսով հեղափոխության նախօրյակին կառավարությունը կորցրեց դահին հավատարիմ դասերի վստահությունը, վորով նա ավելի կղզիացավ և անընդունակ դարձավ յերկրի ղեկավարությունն ուժեղացնել, իսկ սա նպաստում եր կառավարության հեղինակության և դիրքի խախտվելուն: Այսպիսի պայմաններում թագավորին մնում եր մի փորձ ևս անել արտոնյալների ներկայացուցիչների հետ բանակցելու: Նա վորոշեց ԴԱՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ (ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱՏՆԵՐԸ) հրավիրել, վորը սկսած 1614 թ. վոչ մի անգամ չեր հրավիրվել: 1789 թ. հունվարի 24-ին լույս տեսավ թագավորի հրամանը, վորտեղ նա հայտարարում եր ժողովի հրավիրման նպատակը և ընտրությունների կարգը: Թագավորը ցանկանում եր առանց մի վորևե զիջում անելու յերրորդ դասին, առանց դասային հասարակության հիմքերը խախտելու՝ ժողովից իր ուզածն ստանալ, այսինքն ֆինանսական աջակցություն: Այդ ժողովին պիտի մասնակցեր նաև բուրժուազիան, ուրեմն կառավարությունը կարող եր հույս դնել նրա վրա: Հնարավորություն տալով բուրժուազիային ժողովում հանդես գալու, հանձինս իր ներկայացուցիչների՝ կառավարությունը թագավորի համաձայնությամբ վճռեց յերրորդ դասին մի ուրիշ զիջում եւ անել՝ ժողովում կրկնակի տեղ տալ, այսինքն տալ այնքան, վորքան յերկու արտոնյալ դասեր ունեյին: Այսպիսով հոգևորականությունը ժողով պետք է ուղարկեր 300 պատգամավոր, ազնվականությունը 300, իսկ յերրորդ դասը 600, ընդամենը ժողովը 1200 պատգամավորից պիտի կազմված լիներ: Թագավորը սրանով ուզում եր իր հարաբերությունը յերրորդ դասի, հատկապես բուրժուազիայի հետ բարեկամական դարձնել:

Դասային ժողովի գումարումը մեծ շարժում առաջ բերեց յերրորդ



դասի բոլոր շերտերի մեջ: Վոմանք մեծ հույս եյին դնում ժողովի վրա, մեծ մասը ժողովի գումարումը համարեց կառավարության թուլության նշան և սկսեց խոշոր շարժումներ առաջ բերել: Այդպես վարվեցին գյուղացիները և բանվորները: Բուրժուազիան, հենց ձգտում եր ժողովի ամբիոնից թելադրել իր կամքը՝ օգտագործելով ժողովրդական շարժումները: Բուրժուազիան, ինչպես վոր գրգռված եր և դժգոհ կառավարությունից, այնպես էլ վախենում եր ժողովրդական մասսայական շարժումներից. նա աշխատում եր օգտագործել մասսաների դժգոհությունը զարգացող դեպքերի հանդեպ, ղեկավարություն հանդես բերել և աշխատել իր ներկայացուցիչներին և կառավարության դեմ պահանջները անցկացնել: Շատ տեղերում նրան հաջողվում եր այդ անել, վորովհետև միմիայն մասսան հավատում եր նրան, բացի դրանից վարչական ճնշումը, ընտրական խաղերը հօգուտ բուրժուական թեկնածուների եյին կատարվում, մյուս կողմից բուրժուազիայի հեղափոխականորեն հանդես գալը արտոնյալների դեմ՝ հավատ եր ներշնչում մասսաներին: Պակաս դեր չեր խաղում այստեղ նույն մասսայի անկազմակերպ դրությունը, դասակարգային թույլ գիտակցության աստիճանը, վորից օգտվում եր բուրժուազիան, բայց վոչ ինքը գյուղացիությունը:

Դասային ժողովի հրավիրման գաղափարը ընդհանրապես, մեծ վոգևորություն առաջ բերեց հուսահատված, քայքայված և ավերված ժողովրդի մեջ: Յեկեղեցիներում տերտերները քարոզներ եյին կարդում ժողովի մասին և դրանով մեծ հույսեր տալիս գյուղացիներին: Ընտրական կամպանիայի ընթացքում պարզ նկատելի յեր մասսաների քաղաքական զարթոնքը, վոր արտահայտվում եր քաղաքական հարցերի քննությամբ, մասնակցությամբ զանազան ժողովներին և այլն:

Յերբ սկսվեց նախընտրական կամպանիան Ֆրանսիան ամենակրիտիկական ժամանակաշրջանն եր ապրում: Գործազրկությունը ավելի աճեց, այսպես Լիոնում 20.000 գործազուրկ կար, Աբեվիլում՝ 12.000: Սա բացատրվում եր 1786 թ. Անգլիայի հետ կնքված առևտրական դաշնագրով, վորի հետևանքը յեղավ անգլիական ապրանքների մեծաքանակ ներմուծումը, վորին չդիմացավ ֆրանսիական ապրանքների մրցությունը, այդ պատճառով էլ մի շարք մանուֆակտուրաներ փակվեցին և ֆրանսիական ապրանքների արտադրությունը կրճատվեց: Հացի գները բարձրանում եյին, իսկ 1788 թ. բերքը շատ ցածր եր, վորի հետևանքը յեղավ ընդհանուր սովի առաջացումը: Հացը թանկացավ և չեր էլ կարող բավարարել աճող պահանջը: Խոտաբույսերի անբերրիությունը գյուղացիներին ստիպեց անասունների մի մասը մորթել և հողերի մի մասը չցանել: Նեկկերը կարողացավ վոչ բավականությամբ հաց ներ

մածնելը, իսկ հոգևորականների և ազնվականների լիքը ամբարների դռները չէին բացվում: Գյուղացիության դժգոհությունը ծայր աստի-ճանի էր հասնում, երբ տեսնում էր արտոնյալների նման վերաբեր-մունքը: Նույն ընտրությունների ժամանակ աստիճանաբար ավելի հա-մարձակություն և առաջ գալիս հարկերի վերացման մասին խոսքը և մինչև անգամ պահանջներ առաջադրելը: Այսպես Պրովանսում գյուղա-ցիությունը և բանվոր-արհեստավորական մասսան պահանջում է սննդա-մթերքների համար փոքր գին նշանակել, այլուրի հարկը վերացնել, մի քանի տեղերում մինչև անգամ պահանջեցին տասանորդը և սենյորային իրավունքները վերացնել: Այս պայմաններում միաժամանակ տեղի էին ունենում կողոպուտները, թալանները, հարձակումները և խռովություննե-րը: Նման դեպքեր տեղի ունեցան Տուլոնում, Մարսելում, Բեզանսոնում, Լանգեդոկում, Էլզասում և այլն: Խռովություններից ինչպես ասացինք ամենաուժեղը Ռևեյիոնի պաստառների ֆաբրիկայի կործանումն էր Փարիզում: Ժողովրդական մասսաների դժգոհությունները արտա-հայտվում էին առաջին հերթին հացավաճառների դեմ, ինչպես և բոլոր չահագործողների դեմ, հարկային քաղաքականության դեմ, վերջապես ամբողջ ֆեոդալական կարգերի դեմ:

Քաղաքներում ահագին քանակությամբ բրոշյուրային գրականու-թյուն էր տարածվում: Հռչակավոր Միրաբոն լույս ընծայեց մի բրո-շյուր՝ «Կոչ պրովանսի ազգին»: Ռոբեսպիերը Արրասում հրատարակեց «Կոչ արտեզիանական ազգին» բրոշյուրը: Աբատ Սիեյեսը հրատարակեց երկու բրոշյուր՝ «Փորձ արտոնությունների մասին» և «Ի՞նչ բան է եր-րորդ դասը»: Կամիլ Դեմուլենը հրատարակեց «Փիլիսոփայություն ֆրանսիական ազգի համար» աշխատությունը և այլն: Ֆրանսիան երբեք այդպիսի մեծ քանակությամբ քաղաքական բովանդակությամբ բրո-շյուրային գրականություն չէր տեսել: Գրաքննությունն անզոր գտն-վեց կռվելու այս երևույթի դեմ, իսկ պարլամենտները փորձեցին մի քանի բրոշյուրներ այրել, սակայն ժողովրդական շարժման արհավիրքի տակ նահանջեցին:

Սկսվեցին ընտրությունները: Ազնվականությունը և հոգևորա-կանությունն ամեն կերպ աշխատում էին ներկայացուցիչներ ուղարկել բարձր շերտերից, սակայն հակառակ դրան, պատգամավոր ընտրվեցին նաև միջին և ստորին շերտերից, թեկուզ քիչ քանակությամբ: Երրորդ դասը, ինչպես ասացինք, 600 հոգի պետք է տար, որը չափազանց քիչ էր համեմատած դասային քանակական կազմի հետ: Բուրժուազիան ձգտում էր ներկայացուցիչներն ուղարկել Փարիզ, բայց հակառակ այդ ուղ-ղության՝ փոքր քանակությամբ ծխական տերտերներ և ստորին շեր-



տերից փոքր մարդիկ ընտրվեցին առևտրա-արդյունաբերական բուրժուա-զիայի ներկայացուցիչները: Օրինակ՝ երրորդ դասի կողմից պատգամա-վոր ընտրվեց՝ Միրաբոն, Աբատ Սիեյեսը և ուրիշները:

Սակայն ընտրական ի՞նչ իրավունք և ձև գոյություն ուներ: Յու-րաքանչյուր 25 տարին լրացած քաղաքային բնակիչ, որ փոքր քանա-կությամբ հարկ է տալիս, ընտրական իրավունք ուներ: Ընտրական կար-գի նախնական աստիճանությունն ըստ կորպորացիաների էր կատարվում: Օրինակ՝ արհեստավորների և վարպետների կորպորացիան իրավունք ուներ յուրաքանչյուր 100 հոգուց մեկին ընտրելու: Առևտրականների և ազատ պրոֆեսիա ունեցողների կորպորացիան իրավունք ուներ 100-ից 2 պատգամավոր ընտրելու: Սա ցույց է տալիս, որ ընտրական հիմքը ծառայում էր ոչ թե քաղաքացիական իրավասությունը, այլ ու-նեցվածքի, հարստության չափը: Պարզ է, որ պատգամավորների խո-շոր մասը ունևորներ պետք է լինեին: Քաղաքներում, այն բնակիչնե-րը, որոնք կորպորացիաների մեջ կազմակերպված չէին, 100-ից 2 հոգի էին ընտրում: Այս ամբողջ ընտրված պատգամավորությունը հետո պետք է հավաքվեր և կազմեր երրորդ դասի ընտրական ժողովը, որն իր մի-ջից ընտրում էր նոր պատգամավորներ և ընդունում էր հրահանգ պատ-գամավորների համար: Այդ պատգամավորները նոր հավաքվեցին տվյալ շրջանում, որտեղ արդեն ընտրում էին Դասային ժողովի պատ-գամավորներին: Գյուղացիությունը յուրաքանչյուր 200 հոգուց 2 պատ-գամավոր էր ընտրում:

1789 թ. դեկտեմբերի 22-ի հրատարակած դեկրետը հաստատեց ընտրական հետևյալ կարգը.—

«Հոդ. 3. Որպեսզի ակտիվ քաղաքացի լինել՝ անհրաժեշտ է հետևյալ պայմանները՝ 1) պետք է լինել ֆրանսիացի. 2) 25 տա-րեկան հասակ ունենալ. 3) տվյալ կանտոնում ոչ պակաս քան մեկ տարի ապրել. 4) ուղղակի հարկ վճարել տեղական երեքօրյա աշխատավարձի չափ. 5) անձնական ծառայողի դրության մեջ չլի-նել, այսինքն ռոճիկով անձնական ծառայող չլինել»:

Ըստ այս դեկրետի և չգրված ընտրական կարգ ու կանոնների Դա-սային ժողովի ընտրություններն ընդունում էին ժողովրդի պասիվ և ակտիվ բաժանումը, բազմաստիճան սիստեմը և հարստության չա-փանիշը: Ընտրության նախնական աստիճանության ժամանակ գյուղա-ցիությունը և բանվոր-արհեստավորական մասսան կարող էր հանդես գալ հանձինս իր ներկայացուցիչների, բայց որքան բարձրանում ենք ընտրական աստիճաններով, այնքան չքանում է ժողովրդի ձայնը և հան-դես է գալիս ունևոր շերտը: Ահա թե ինչու համար երրորդ դասի ներ-

կալվածատերերը մեծ մասամբ բարձրաստիճան թեկնածուներ էին: Յերրորդ դասի ընտրվածների ցուցակում էր Միրզայի հետ միասին նաև Մակսիմիլիան Բարխուդարը:

Արտոնյալների ընտրական ժողովներում կատաղի պայքար էր տարվում զանազան հոսանքների միջև: Պահպանողական և բարձր հոգևորականության ընդհանուր տակտիկան ուներ միջին և գավառային ազնվականության կողմից: Ծայրահեղ ազնվականությունն և ծխական հոգևորականությունն այդ ժողովներում հանդես է գալիս համախմբված, ձուլված, մինչդեռ բարձր շերտերը ձգտում են ստորին շերտերի թեկնածուների առաջադրումը և մի տեսակ ամոթ են համարում նրանց հետ միասին հանդես գալ ժողովներում: Ծխական տերտերներն ավելի ակտիվ են հանդես գալիս հարուստ հոգևորականության դեմ: Մինչդեռ արտոնյալների մոտ ընտրական սուր պայքար էր տարվում՝ յերրորդ դասի տեղական ժողովներում միապետականությունն ավելի ուժեղ էր: Սակայն չի կարելի ասել, վոր այս ընտրությունները միանգամայն հանգիստ պայմաններում էին տեղի ունենում: Պայքարը յերրորդ դասի զանազան հոսանքների միջև նույնպես ուժեղ էր տարվում, չէ՞ վոր չափերի ուժեղ հակասություն գոյություն ուներ: Արդեն ընտրական կարգը իր պաշտպանության տակ էր վերցրել հարուստների հաջողության ապահովումը: Յերրորդ դասի միապետականության ընդհանուր կողմն այն էր, վոր գոյություն ուներ միահամուռ համաձայնությունը հին կարգերի նորոգմամբ. Ֆեոդալական կարգերի փոփոխումը միացնում էր բոլորին: Գյուղացիություն, արհեստավորություն և բանվորություն պահանջները տարբեր էին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի պահանջներից: Վորքան մենք բարձրանում ենք ընտրական աստիճանի բարձր ժողովները, այնքան կորչում են մասսաների կոնկրետ պահանջները և հանդես են գալիս ունևոր հասարակության քաղաքական-սոցիալական պահանջները:

Զանազան հետաքրքիր բովանդակություն ունեն հրահանգները: Այդ հրահանգները ցույց են տալիս, թե յերրորդ դասի զանազան հոսանքները քաղաքական և սոցիալական ինչ պահանջներ և ծրագիր են առաջադրում: Դումային ժողովի պատգամավորների հրահանգները այն չեն, վորոնք ընդունվել էին նախնական ընտրական ժողովներում: Այդ ժողովներում ընդունված հրահանգներն աստիճանաբար փոխվում էին, հանվում կամ խմբագրվում էին մինչև հասնում էին ընտրական վերջին ինստանցիային: Ահա թե ինչու ժողովում ավելի չափավոր և հաշտվողական պահանջներ են առաջադրվում, հակառակ ընտրողների պահանջներին: Այդ ժողովում չի կարելի տեսնել մասսաների ցանկությունների և պահանջների իսկական պատկերը: Այստեղ ղեկավարող տեղ էր գրավում բուրժուազիայի քաղաքական ծրագիրը, ի՞նչ էր պահանջում բուրժուազիան իր հրահանգներում և քաղաքական ծրագրերում: Մենք այստեղ մեջ կբերենք Տփխիս քաղաքի առևտրականների պահանջներից կտորներ՝

«Առաջին. Յեթե հակառակ ընդհանուր պահանջի՝ Անգլիայի հետ կնքված, դաշնագրի փոփոխությունը պիտի հետաձգվի, այն ժամանակ վորպեսզի խուսափենք նրա վնասակար ազդեցությունից անհրաժեշտ է տեղական արդյունքների մաքսը բարձրացնել:

Յերկրորդ. Վորպեսզի այսուհետև առանց Դումային ժողովի առևտրական վոչ մի պայմանագիր չկնքվի:

Յերրորդ. Վորպեսզի արգելվի ստարերկրյա արդյունքների ներմուծումը բացառությամբ հումույթի, վորը Ռուսաստանում չի արտադրվում:

Յոթերորդ.— Վորպեսզի առևտուր անելու համար ամեն մի արտոնություն վերացվի.

Իններորդ. Վորպեսզի մանուֆակտուրային տեսչի անտակտության պատճառով՝ տեսուչների ինստիտուտը վերացվի:

Տասնչորսերորդ. Վորպեսզի մի ընդհանուր չափ ու կշիռ հաստատվի ամբողջ պետության մեջ.

Քսանիններորդ.— Վորպեսզի յուրաքանչյուր գավառի գլխավոր քաղաքում առևտրական դատարան հիմնվի.

Յերեսունյերկույերորդ.— Վորպեսզի աղի և գինու ակցիզը վերացվի.

Յերեսունյերեքերորդ.— Վորպեսզի պետական պաշտոնները այլևս վաճառքի չհանվեն և հետ գնվեն այն գնով, վոր գնով վոր ձեռք են բերվել.

Յերեսունվեցերորդ. Վորպեսզի մինիստրները պատասխանատու լինեն ազգի առաջ, հանձին Դումային ժողովի.

Յերեսունութերորդ. Վորպեսզի առանց ազգի համաձայնության վոչ մի նոր հարկ չդրվի.

Յերեսունիններորդ.— Վորպեսզի հողահարկ հաստատվի, վորն ամենաարդարացի հարկն է:

Քառասուներորդ.— Վորպեսզի վճռապես յեկեղեցական և ազնվական բոլոր սեփականությունների վրա հարկ դրվի:

Քառասունվեցերորդ. Վորպեսզի մամուլի ազատություն լինի: Դա ժողովրդի ձայնն է»:

Այն ժամանակվա առևտրական բուրժուազիայի քաղաքական համոզմունքի լավագույն արտահայտիչն է այս փաստաթուղթը: Իր պահանջներում սա առաջադիմական էր, վոչ միայն քաղաքական հասարա-

կական տարրության, այլև կապիտալիզմի զարգացման համար հնարավորություններ առաջ բերելու տեսակետից: Արդյունաբերական բուրժուազիան և քաղաքային ինտելիգենցիան ավելի ամբողջական պահանջներ եյին առաջադրում:

Ի՞նչ պահանջներ եյին առաջադրում գյուղացիները հեղափոխության նախօրյակին: Մենք այդ պահանջների մասին մի հրահանգ ունենք տպագրված հայերեն հրատարակված քրեստոմատիայի մեջ (պրակ 1-ին, եջ 101—102): Այստեղ կուզենայինք մի ուրիշ հրահանգի մասին խոսել: Այս հրահանգը կազմել են Թուա գյուղի գյուղացիները:

«Մենք շատ ենք ցանկանում, վոր բոլոր այն հարկերից, վորոնք պետք վերջացվեն, առաջին հերթին վերջացվեն պարենավորման մթերքների վրա դրված հարկերը, ինչպես օրինակ աղայինը:

Մենք խնդրում ենք վոչնչացնել թագավորական վորսորդությունը:

Մենք պահանջում ենք, վոր ամեն մեկին թույլատրվի օգտվելու իր բնական իրավունքից վոչնչացնելու համար իր հողերի սահմանում վորսի կենդանիները: Ինչ իրավունքով մենք գյուղացիներս, բավականաչափ միջոցներ չունենալով աղավնիներ պահելու, պետք է կերակրենք հանդուրժենք այն աղավնիներին, վորոնք պատկանում են սենյորներին և խոշոր սեփականատերերին:

Մենք ձեր ուշադրությունն ենք հրավիրում, վոր հակառակ ժամանակակից գյուղատնտեսների կարծիքների՝ բոլոր գյուղերում, վորտեղ հնարավոր է, կազմակերպվեն համայնքային արոտատեղիներ և թող վերադարձվեն խլված արոտատեղիները»:

Նույն և Թուա գյուղի համայնքների պահանջները չափազանց պարզ պատկեր են տալիս մեզ այն ժամանակվա գյուղացիության քաղաքական հասունության մասին: Այդ պահանջների հետևողական գործադրումը մեզ կհասցնի ֆեոդալական կարգերի վոչնչացման:

1789 թ. մայիսի 5-ին Փարիզում տեղի ունեցավ Դասային ժողովի բացումը: Ժողովի բացման արարողությունը, դասերի տեղերի և ընդունելության ձևերը, հենց սկզբից և յեթ ցույց տվին թագավորական իշխանության վերաբերմունքը դեպի այս կամ այն դասը: Առաջին յերկու դասերը թագավորի կողմից մեծ շքով և պատվով ընդունվեցին: Մինչդեռ յերրորդ դասի ընդունելությունն աննկատելի անցավ: Թագավորը առաջին յերկու դասերի պատգամավորների անհատական ընդունելություն եր կատարում և յերկարատև զրույց անում, մինչդեռ յեր-



րորդ դասին արհամարհական վերաբերմունք եր հանդես բերում: Ժողովի բացման ամբողջ պատկերը հին դասային արտոնությունների և իրավունքների մի նոր արտահայտություն եր, վոր հենց սկզբից դժգոհություն առաջ բերեց յերրորդ դասի պատգամավորների շարքերում:

Ժողովի առաջին նիստին հանդես յեկավ թագավորը ճառ հագնված, և իր ճառով փորձեց ժողովի իրավունքների սահմանները վորոշել: Նա պահանջում եր ֆինանսական հարցերի քննություն կատարել և մտածել, թե ինչ կերպ պետական խախտված ֆինանսական դրությունը վերականգնել: Հետո հանդես յեկավ մինիստր, բուրժուաբանկիր Նեկկերը, վոր ցանկացավ ֆինանսական դրությունը պարզել, սակայն իսկական դրությունը ծածկեց: Թե թագավորի և թե Նեկկերի ճառերից յերրորդ դասը դժգոհ մնաց: Պարզ եր, վոր նրանք չեն ցանկանում մի վորևէ լուրջ հարցի քննություն կատարել, բացի դրամականից և վոչ էլ ռեֆորմներ կատարել: Բայց յերրորդ դասի դժգոհությունը դրանով ավելի խորացավ: Դժգոհությունն սկսվել եր վոչ միայն ընդունելության կարգ ու կանոնից, այլ և քվեարկության կարգից, վոր վաղուց գոյություն ուներ, այսինք քվեարկել ըստ դասերի, առանց դասային պատգամավորների քանակի նկատի ունենալու: Թագավորը և արտոնյալները պահանջում եյին քվեարկել ըստ դասերի, յերրորդ դասը՝ ձայների մեծամասնությամբ, վորպիսի դեպքում նա կշահեր, վորովհետև ձայների մեծ քանակություն ուներ, և բացի դրանից նա հույս ուներ քվեարկության ժամանակ յերկու դասերից վորոշ քանակությամբ ձայներ նվաճել, սակայն յերկու կողմերն էլ չզիջեցին: Այդ պայմաններում յերրորդ դասին մնում եր կամ ցրվել կամ անցնել ընդդիմադիր գործունեության: Նա ընտրեց վերջինը:

Յերբ հայտնվեց, վոր թագավորը համաձայն չէ քվեարկության կարգը փոխելու և պատրաստ է ժողովը ցրելու՝ յերրորդ դասը վորոշեց չցրվել և ամեն դրությունից օգտվել շարունակելու ժողովը, առանց, թեկուզ, մյուս դասերի ներկայության: Ժողովի նիստում կատարվող պայքարը գաղտնի չմնաց Փարիզի ժողովրդին: Նա յերբ ստացավ այդ լուրերը, աղմկեց, հուզվեց և փողոցները հավաքվեց, վորպես ցույց թագավորի դեմ և վորպես աջակցություն և պաշտպանություն յերրորդ դասի պատգամավորներին: Յերրորդ դասը վճռեց նիստը շարունակել, պատգամավորները մեկնեցին ժողովի դահլիճը նիստը շարունակելու, սակայն դռները փակ գտան: Այն ժամանակ նրանք վորոնեցին մի ուրիշ դահլիճ՝ կանգ առան «գնդակախաղի» դահլիճում: Յերբ

պատգամավորները հավաքվեցին և ցանկանում էին նիստը սկսել, ներս մտավ թագավորի ներկայացուցիչը՝ պահանջեց ցրվել: Այդ ժամանակ հանդես յեկավ Միրաբոն և հայտարարեց, «գնացեք, ասացեք նրանց, վորոնք ուղարկել են ձեզ, վոր մենք այստեղ ենք գտնվում ժողովրդի կամքի համաձայն և մեր տեղերը կթողնենք միայն սվինների սպառնալիքի տակ»: Հունիսի 17-ին ժողովը իրեն Ազգային ժողով հայտարարեց: Նա առաջարկեց մյուս դասերին չհակադրել ազգի կամքին և միանալ իրենց ու մյուս կողմից անցնել մի շարք ռեֆորմի վերաբերյալ հարցերի քննության: Այս դիմումը հաջողություն ունեցավ, մի շարք ծխական և առաջադեմ հոգևորականներ անցան յերրորդ դասի կողմը: Վոգևորությունը մեծ էր մասսաների կողմից: Մինչդեռ կառավարությունը չվհատվել էր: Թագավորի յեղբայր կոմս Դ՝ Արտուան և ամբողջ ռեակցիոն մասսան թագավորից պահանջում էր անմիջապես զորքեր հավաքել Փարիզի շուրջը և զենքի դիմել: Յերբ մի խումբ գվարդիական զինվորներ մտան նիստի դահլիճը՝ ցրելու պատգամավորներին՝ նրանց դիմավորեցին գեներալ Լաֆայետը և իշխան Լարոշֆուկոն թրերը հանած և թույլ չտվին զինվորներին իրենց գործը անելու: Ամբողջ հունիս ամսվա վերջին օրերը լարված դրությամբ անցան: Թագավորը զորքեր էր հավաքում, Փարիզի բնակչությունը հուզվում էր և պատրաստվում ապստամբության: Զինվորներից անհատները և փոքրիկ խմբերը համակրություն էին հայտնում ժողովրդի ցույցերին: Այդ նշան էր, վոր զորքի դիսցիպլինան ընկնում է և նա պատրաստ է անցնելու ժողովրդի կողմը:

Պալե-Ռոյալ այգին, բանվորական Սեն-Անտուան թաղամասն արդեն վոտքի յեր կանգնել: Պալե-Ռոյալը միտինգների վայր դարձավ: Հունիսի 30-ին այգում հավաքված 4.000 հոգի հարձակվեցին բանտի վրա և բանտարկված զինվորներին ազատեցին: Այս դեպքը դրությունն ավելի լրջացրեց: Ազգային ժողովն ամեն կերպ ձգտում էր դեպքերին լուրջ ընթացք չտալ և թագավորին համոզել կտրուկ միջոցների չդիմել: Սակայն Փարիզի բնակչությունն արդեն վոտքի յեր կանգնել:

Հուլիսի 11-ին թագավորը գաղտնի կերպով Նեկկերին հեռացրեց մինիստրությունից և Նորին հրավիրեց, վորն ակնհայտնի հակահեղափոխական էր: Յերբ հետևյալ օրը Նեկկերի հեռացման լուրը հասավ ժողովրդին՝ նա ցույց կազմակերպեց կառավարության դեմ և համակրանք արտահայտեց Նեկկերին: Կամիլ Դեմուլենը Պալե-Ռոյալում կրակոտ ճառեր էր ասում և կոչ էր անում զինվել: Յերբ լուր տարածվեց, վոր թագավորական գվարդիան հարձակվել է Տյուլլերի պալատի



այգում հավաքված ամբոխի վրա, Փարիզի փողոցներում թմբուկներ զարկեցին և կոչ արին զինվելու ու ազգային գվարդիա մտնելու: Հուլիսի 13-ին արդեն զինված մասսա գոյություն ուներ: Նա խանութներից խլել էր 28 հազար հրացան և Հաշմանդամների շենքից մի քանի թնդանոթներ: Ազգային ժողովն անցավ անընդհատ աշխատանքի, իսկ Պալատը դեռ շփոթված դրության մեջ էր:

Սակայն զենքի մեծ կարիք էր զգում ապստամբված մասսան: Նրա ներկայացուցիչները Բաստիլի պարետից պահանջեցին զենք բաց թողնել իրենց, իսկ դեպի քաղաք ուղղված թնդանոթների բերանը մյուս կողմը շուռ տալ: Պարետը չէր համաձայնվում: Այն ժամանակ Սեն-Անտուան արվարձանի բանվորները հեղափոխության կողմն անցած գվարդիայի հետ միասին հուլիսի 14-ին հարձակվեցին բերդի վրա: Տաք կռվից հետո ապստամբված մասսան գրավեց Բաստիլը, այդ բոլորին ատելի և ֆեոդալական բռնակալության սիմվոլը: Ապստամբները բանտարկյալներին ազատեցին, իսկ գրավված զենքերը բաժանեցին: Հեղափոխությունը հաղթել էր:

Կոմս Դ՝ Արտուան թագավորին համոզում էր Մեց փախչել. Թագավորը չէր համաձայնվում: Նա դրան հակառակ, գնաց Ազգային ժողով: Ժողովը պահանջեց նրանից զորքերը հետ կանչել և Նեկկերին նորից աշխատանքի հրավիրել: Թագավորը դեռ տատանվում էր, մինչդեռ զինված մասսան կազմակերպվեց վորպես Ազգային գվարդիա, հրամանատար նշանակեց Լաֆայետին, իսկ Փարիզի քաղաքագլուխ մեր՝ Բայլլին: Այն ժամանակ հուլիսի 17-ին թագավորը նորից մեկնեց ժողովի դահլիճը և վրան կպցրած հեղափոխության սիմվոլ՝ յեռագույն նշանը՝ մտավ դահլիճ: Նա դրանով ուզում էր ասել, վոր հավատարիմ է մնում ազգի կամքին: Ժողովը վողջունեց նրա այդ քայլը, վստահություն հայտնեց նրան: Այսուհետև թագավորը այլևս չէր կառավարում, նրա իշխանությունը սահմանափակում էր Ազգային ժողովը և հեղափոխական մասսան: Այն ժամանակ կոմս Դ՝ Արտուան և հեղափոխության կատաղի հակառակորդները՝ ազնվականները, բարձրաստիճան զինվորականները և հոգևորականները փախան արտասահման և կենտրոնացան սահմանակից Կոբլենց քաղաքում: Կոմս Դ՝ Արտուայի փախուստից հետո, սկսվում է արտոնյալների փախուստ-էմիգրացիան: Նեկկերը նորից վերադարձավ: Հուլիսի 9-ին Ազգային ժողովը իրեն հայտարարեց Հիմնադիր ժողով, վոր կնշանակեր, թե նա կազմակերպելու յե Ֆրանսիայի նոր իշխանությունը և հաստատելու յե հասարակական նոր հարաբերություններ:

Սակայն ինչ էր կատարվում գավառներում: Քաղաքներում և գյուղերում հեղափոխական մասսան հանգիստ դրության մեջ չէր: Նա նույնպես ոտքի յեր կանգնել և ակտիվանում էր: Գավառների այդ շարժումները վոգեվորություն և ուժ եյին առել Փարիզի ապստամբված բնակչությունից: Բոլոր քաղաքների բուրժուազիան ամեն կերպ աշխատում էր իր ձեռքը գցել քաղաքային ինքնավարությունները և հեղափոխական կոմիտեներ կազմակերպել: Հին իշխանությունն ամեն վայրում դիմադրում էր, սակայն միշտ էլ տեղի յեր տալիս: Ամեն տեղ կազմակերպվում եյին կոմիտեներ, ընտրվում էր ժողովուրդը և ազգային գվարդիա կազմակերպում: Գրավում եյին ամբարները, բերդերը և բանտերը, զենք հավաքում և զինվում: Մի շարք վայրերում թագավորության իշխանության ներկայացուցիչները հեղափոխական օրգաններում եյին աշխատում, նրանք չեյին դիմադրում, վորովհետև վոչ մի հույս և հենարան չկար նախկին դրությունը վերականգնելու: Թագավորական զինված ուժերը ապստամբված ժողովրդի կողմն եյին անցել: Ուրեմն դիմադրությունն իզուր էր և ինտենդանտները, գեներալները և այլ պաշտոնյաները ստիպված, լռում եյին և շատ տեղերում էլ ստիպված ակտիվ աշխատանք եյին տանում հեղափոխական օրգաններում: Գյուղացիությունն ավելի ակտիվ էր և նա ամեն տեղ անցավ հեղափոխական ըմբոստների կազմակերպման: Հատկապես հուլիսի 20-ից գյուղացիական շարժումները ուժեղացան: Գյուղացիական հեղափոխական ըմբոստների հետ միասին մենք տեսնում ենք բանդաների և ավազակախմբերի հարձակումները, թալանները և կողոպուտները: Բուրժուազիան սոսկաց մասսայական այդ շարժումներից. այսպես կոչված «չորրորդ դասի» ըմբոստները լավ բան չեյին խոստանում նրան: Գյուղացիությունն անցավ անմիջական եքսպրոպրիացիայի: Գյուղացին չէր վճարում տուրքերը, հրաժարվում էր հարկերը վճարել, կողոպտում և քանդում էր վանական և ազնվական կալվածքները, իսկ բուրժուազիան ամեն տեղ ձգտում էր արգելել այդ շարժումները, պատժել հանցավորներին: Բուրժուական գվարդիան և կոմիտեները կռվում եյին գյուղացիական շարժումների դեմ և աշխատում եյին կարգը վերականգնել: Կանոնավոր պատերազմ սկսվեց գյուղացիության դեմ, շատ տեղերում հաջողվում էր դադարեցնել շարժումները, այլ տեղերում հաջողվում էր գյուղացիական զինված ուժերը ջախջախել: Մի քանի վայրերում ձերբակալվածներին մահվան եյին դատապարտում: Որոշ վայրերում իսկական քաղաքացիական պատերազմ էր մղվում յերրորդ դասի ներսում:



Բուրժուազիան ուժերի մոբիլիզացիա չէր կատարում գյուղացիական շարժումները ճնշելու համար, իսկ բանվորները և գյուղացիները դիմադրում եյին և դուրս գալիս բուրժուազիայի դեմ: Լիոն քաղաքի ազգային գվարդիան ուղևորվում էր դոֆինե գվարդիային ճնշելու համար գյուղացիական շարժումները, մինչդեռ բանվորները համակրում եյին այդ շարժումները: Յերրորդ դասը սկսել էր պառակտման պրոցեսն ապրել:

Ազգային ժողովը չափազանց դժգոհ էր և վախենում էր այդ շարժումներից: Նա կոմիսարներ ուղարկեց տեղերը և հրահանգեց կոմիտեներին կռվել շարժումների դեմ: Ժողովի մի խոշոր մասը առաջարկում էր անհապաղ զինված ուժեր ուղարկել խռովարարների դեմ: Սակայն ավելի խելահաս պատգամավորներն զգում եյին, վոր վոչ թե զինված ուժն է հանգստացնելու գյուղացիությանը, այլ նրանց պահանջների կատարումը՝ այսինքն ագրարային հարցի լուծումը, սենյորային հարկերի և պարտականությունների վերացումը:

Թե Փարիզում և թե Լիոնում և բոլոր խոշոր կենտրոններում իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը, գյուղացիությունը և բանվորությունը հեղափոխության օրերին պաշտպանում եյին բուրժուազիայի թեկնածուներին և նրանցից կազմված օրգաններին: Հին կարգերի դեմ պայքարելու գաղափարը միացնում էր բոլորին ընդհանուր թշնամու դեմ: Ազնվականությունը, բարձր հոգևորականությունը ու բուրժուազիայի արիստոկրատական մասը փոքր դիմադրություն հանդես բերելուց հետո՝ վերջ ի վերջո անցնում էր բուրժուազիայի կողմը, գործում նրա հետ և միասին ձեռնարկումներ կատարում հեղափոխական մասսայի դեմ: Բուրժուազիան սաստիկ վախենում էր հեղափոխության խորացումից, գյուղացիական և բանվորական շարժումներից: Նա չէր մոռացել, վոր Բաստիլի գրավումը հակառակ իր կամքի յեղավ: Մյուս կողմից նա չէր կարող ընդունել ապստամբված ժողովրդի պահանջները և չէր կարող իրագործել այդ: Ընդունել այդ՝ կնշանակեր վոչ միայն ազնվականների եքսպրոպրիացիա կատարել, այլ և իրեն, վորովհետև մեծաքանակ կալվածքների, հողերի և սեննայի տեր էր, իսկ հեղափոխության օրերին նրա այդ իրավունքներն ընդարձակվել եյին: Տեղի ունեցավ սեփականատերերի միացում ընդդեմ սեփականություն չունեցողների: Շատ տեղերում բուրժուազիան ուրախությամբ էր ընդունում հին պաշտոնյաներին և վողջունում էր նրանց այդ քայլը: Բուրժու-

ազիան ուժերի կոնսոլիդացիա յեր կատարում ընդդեմ հեղափոխության, ընդդեմ հեղափոխության արմատական շերտերի:

Բուրժուազիան ամեն տեղ հանդես եր յեկել, վորպես հեղափոխության կազմակերպիչն ու ղեկավարը, բայց ինչպես յեղավ, վոր բուրժուազիան հաղթանակեց: Բուրժուազիան գործնականորեն հաղթեց հին կարգերի կողմնակիցներին, վոչ միայն այն պատճառով, վոր նա հեղափոխական եր այդ ժամանակ, այլ և այն, վոր նրան դաշնակցել եր գյուղացիությունն ու արհեստա-բանվորական մասսան: Վերջի վերջո բուրժուազիայի հաղթանակը Դասային ժողովում, գավառներում դասային իշխանության դեմ և այլն, կատարվեց ժողովրդական ընդհանուր շարժման և ապստամբության պատճառով: Բուրժուազիան իր պայքարը տանում եր պարլամենտարիզմի ուղիով, ապստամբված մասսան նրան առելի առաջ եր հրում, նրան ույժ եր տալիս և միայն դրանով կարելի յե բացատրել նրա հաղթանակը: Նույն այդ մասսայի ջանքերով եր, վոր նա իշխանությունը վերցրեց: 1789 թվից իշխանության գլուխն անցավ պահպանողական խոշոր, արիստոկրատ բուրժուազիան դաշնակցած ազնվականության մի մասի հետ: Այնուհետև բուրժուազիան տիրող դաս եր: Սակայն այդ նույն հաղթությունը նոր հակասություններ առաջ բերեց: Դասակարգային պայքարը այդ հաղթությամբ վոչ թե թուլացավ, այլ խորացավ: Պայքարը տարվում եր մի կողմից բուրժուազիայի ներսում, նրա ֆրակցիաների մեջ՝ խոշոր բուրժուազիայի և միջին, այսպես կոչված, գործունյա առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի միջև, մյուս կողմից բանվորության և գյուղացիության և նրա միջև: Այդ պայքարի պատճառները և արմատները պետք է վորոնել հաղթած բուրժուազիայի սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ, վորի անալիզին ենք մենք այժմ անցնում:

Խոշոր բուրժուազիան իշխանության գլուխն անցնելով, ինչպե՞ս կազմակերպվեց վորպես դասակարգ, կամ ի՞նչպես վերակառուցեց Ֆրանսիայի տնտեսական-հասարակական և պետական կարգը: Այդ ծրագիրն իրագործելիս՝ բուրժուազիան հիմք եր վերցնում բուրժուական հասարակակարգի ստեղծումը՝ պայքարելով մի կողմից ռոյալիստների՝ այսինքն հակահեղափոխականների, հին կարգերի կողմնակիցների դեմ, մյուս կողմից ժողովրդական մասսաների դեմ: Նա կրակն ուղղելով վերջինիս կողմը, աշխատում եր առաջիններին իրեն յենթարկել, դաշնակցել նրանց հետ, յերբեմն նրանցից ամենակատաղիներին խորտակելով, բնաջնջելով: Չե վոր վտանգը նրա կազմակերպած յերիտասարդ իշխանության դեմ գալիս եր վոչ միայն ժողովրդական մասսաների, այլ և



հին կարգերի կողմից: Չի կարելի ասել, վոր արտոնյալ դասերը հեշտությամբ իրենց տեղը զիջեցին նորին: Նրանք դեռ պայքարում եյին և իրենց հույսը չեյին կորցնում հին կարգերը ռեստավրացիայի յենթարկելու, վերականգնելու: Հասկանալու համար դասակարգային պայքարի նոր ստադիայի եյությունը՝ անհրաժեշտ է հենց քննել 1789–1892 թ. թ. կատարված ռեֆորմների բովանդակությունը: Ավելի լավ կլինի, յեթե մենք այդ ժամանակաշրջանը բաժանենք վորոշ ետապների: Յեթե առաջին ետապը՝ 1789 թ. մայիսից մինչև 1789 թ. հոկտեմբերի 5–6-ը բուրժուազիայի հեղափոխական պայքարն եր հին կարգերի դեմ, իշխանության գրավման պատմության եպոխան, մյուս ետապները՝ յերկրորդը՝ 1789 թ. հոկտեմբերից մինչև Որենսդրական ժողովի գումարումը, և յերրորդը՝ Որենսդրական ժողովից մինչև 1792 թ. ոգոստոսի 10-ի հեղափոխությունը, բնորոշվում եր, վորպես իշխանության կազմակերպման ետապներ: Մենք առաջին հարցի մասին կիսով չափ խոսեցինք: Այժմ անցնենք շարունակությանը, այսինքն յերկրորդ ետապի պատմությանը:

Ազգային և Հիմնադիր ժողովների որենսդրական գործունեյությունների հիմնական կետերն եյին՝ ագրարային, բանվորական և պետական իշխանության կազմակերպման խնդիրները: Ամենից առաջ քըննության առնենք պատմական յերկու փաստաթղթերի բովանդակությունը: Մեկը մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան է, մյուսը 1791 թ. սահմանադրությունն է (Կոնստիտուցիան): Այդ յերկու փաստաթղթերի քննությունը մեզ կպարզի բուրժուազիայի մղած պայքարի իմաստը՝ ընդհանրապես հեղափոխության առաջին ետապի դասակարգային բնույթը: Դեկլարացիան ընդունվեց 1789 թ. ոգոստոսի 27-ին: Նրա հիմնական կետերը սրանք են.—

«1. Մարդիկ ծնվում են ու մնում իրենց իրավունքներով ազատ ու հավասար. հասարակական տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանրության ոգտի վրա:

2. Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակն է՝ պահպանել մարդու բնական ու անկապտելի իրավունքները: Այդ իրավունքներն են՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունն և ճնշման դիմադրելը:

4. Ազատությունն է՝ իրավունք անելու այն բոլորը, ինչ վոր ուրիշին չի վնասում:

6. Որենքն ընդհանուր կամքի արտահայտությունն է.

7. Վոչ վոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել, կամ բանտարկվել բացի որենքում հիշված դեպքերից և այդ կատարվում է անպատճառ որենքով պահանջվելիք ձևերով:

11. Մտքերի ու կարծիքների ազատ հաղորդությունը մարդու ամենաթանկագին իրավունքներից մեկն է:

17. Վորովհետև սեփականությունն անխախտելի և սրբազան իրավունք է, ուստի վոչ վոք չի կարող զրկվել սեփականությունից բացի այն դեպքից, յերբ այդ բացահայտ կերպով պահանջում է օրինական ճանապարհով վկայված հանրային անհրաժեշտությունը, այն էլ անպայման նախապես արդեն հատուցման պայմանով»:

Դեկլարացիայի այս կետերը հիմնականորեն ընդգրկում են բուրժուազիայի աշխարհայացքը և տեսակետներն իր հեղափոխության էպոխայում:

Ամբողջ դեկլարացիան բարձրացող. բուրժուազիայի հեղափոխական մանիֆեստն է: Բուրժուական այս մանիֆեստը յերկու հիմնական հարցեր է շոշափում՝ 1) Վերաբերմունք ֆեոդալական կարգերի հանդեպ և 2) սեփականության խնդիրը հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Այդ դեկլարացիան հիմնովին վոչնչացնում է ֆեոդալական արտադրական հարաբերությունները և փոխարեն առաջադրում է նորը՝ բուրժուականը: Դեկլարացիան հիմք դարձավ Ֆրանսիայում 1789–1792 թ. թ. նոր հասարակարգ ստեղծելու համար: Բուրժուազիան իբրև դասակարգ ձգտելով իրագործել հենց այդ նոր հասարակարգը, հակառակ ավանդապահական-կրոնական, ֆեոդալական կարգ ու կանոնի, կազմակերպեց արիստոկրատական, խոշոր բուրժուական իրավահավասարությունը և հաստատեց բուրժուական տիպի քաղաքացիական հարաբերություններ: Բուրժուազիան ճնշված դաս էր ֆեոդալական իրավակարգում, դրա համար էլ նա համարձակ կերպով դուրս յեկավ նրա դեմ և առաջադրեց իր հեղափոխական տեսակետները: Այդ տեսակետները կազմակերպվում էին դեռ ֆեոդալական իրավակարգում, այնպես, վորպես ինքը բուրժուազիան էր կազմակերպվում: Դեկլարացիայում նշված մտքերը և հետագայում իր պայքարի ընթացքում առաջ բերած այլ հայացքները արտահայտվել էին թե բանավոր և թե գրավոր դեռ XVIII դարում, հանձինս այն ժամանակվա լուսավորիչների:

Դեռ XVIII դարում ֆրանսիական գրողները քննադատում էին ֆեոդալական հասարակությունը, դուրս բերում նրա բացասական կողմերը և փոխարենը առաջադրում էին ազատ, առաջադիմական և լուսավորական կարգեր հաստատել: Բոլոր լուսավորիչները՝ Վոլտեր, Ռուսսո և այլն, պահանջում էին վերացնել յեկեղեցու և պետության



անակցի և կապիտ միջամտությունները անհատական, սեփականատիրական և խոսքի ու մամուլի հարաբերությունների մեջ: Նրանք պահանջում էին անհատի մտքեր արծարծելու և դավանանքի բնագավառներում լիակատար ազատություն: Նրանց համար ամենադատապարտելին և անհանդուրժելին անհատի հարցն էր հին հասարակարգում: Անհատը և նրա բոլոր մտքերի ու զգացմունքների արտահայտությունները կապանքված էին ֆեոդալական հասարակարգում՝ վորպես հետևանք պաշտոնական փչացած և այլասերված յեկեղեցու և չար ու ցածր հետադեմ գիտության կողմից առաջադրված կանոնների, կարգերի ու նորմաների: Բնական և հասարակական գիտությունները չէին զարգանում, վորովհետև սահմանափակ էր գործող միտքը, գիտությունը և հնարավորությունները: Գիտությունը, մյուս կողմից, ինքը, թագավորի և անհատական քմահաճույքների արտահայտություններն էին: Չկար պետության հիմնական օրենքների կայունություն, սահմանված ու հաստատված դատաստանական ու սեփականատիրական օրենսդրություն: Յեղած օրենսդրությունը արտոնյալների շահերի թելադրանքն էր, այն էլ չէր պահպանվում, վորովհետև չկար կուռ և կենտրոնացած իշխանություն, դրա փոխարեն գոյություն ունեին սենյորի, յեպիսկոպոսի, թագավորական պաշտոնյաների անձնական կարգադրությունները, չկար քաղաքացիական ազատություն և հավասարություն: Բոլոր բարիքները և իրավունքները պատկանում են մի խումբ արտոնյալների: Նոր զարգացող միտքը, անհատը, ամբողջ լուսավորված ինտելիգենցիան խեղդվում էր հին կարգերի մթնոլորտում: XVIII դարի բուրժուա-ազնվական ինտելիգենցիան իր բանավոր ու գրավոր պրոպագանդայով ստեղծեց այն ժամանակվա պայմաններում ամենահեղափոխական, գիտական, լուսավորված հայացքների մի ամբողջ սիստեմ, մի ամբողջ գաղափարախոսություն, վորոնք հետագայում հեղափոխության օրերին մեծ մասամբ պաշտոնական ու ղեկավարող դեր խաղացին: 1789 թ. դեկլարացիան այդ գաղափարախոսության խտացված արտահայտությունն է, վորը հաղթող բուրժուազիան հակադրեց միջնադարյան խավարամիտ ու անչափ սահմանափակ ազնվա-հոգևորական հայացքներին: Դեկլարացիան առաջադրում էր անհատի ազատություն, հանրության ապահովություն, հավասարություն օրենքների առաջ և սեփականության անխախտելիություն, այսինքն այն բոլորը, վորոնց ձգտում էր ունենալ ամեն մի լուսավորիչ, ամեն մի սեփականատեր — բուրժուա: Դեկլարացիայի հեղինակները հանդես գալով ֆեոդալական կարգերի դեմ՝ նրանք միաժամանակ սրբագործում են նույն այդ կարգերի մի քանի կողմերը: Դեկլարացիան ընդունում

և անհատի ազատության սկզբունքները և հավասարությունը օրենքի ա-ռաջ, վորով նա փշրում է ֆեոդալական կարգերի յերկու հզոր դասային սկզբունքները, բայց նա միաժամանակ սեփականության սկզբունքն էլ է ընդունում, վորով նա հաստատում է սեփականատիրական հասարա-կարգը: Պետությունը հաստատելու յե սեփականության իրավունքը: Այս-պիսով բուրժուազիան մի կողմից վերացնում է դասային անհավասարու-թյունը, բայց մյուս կողմից հաստատում է սեփականության ինստիտու-տը, վորը հենց անհավասարության աղբյուրն է: Բուրժուազիան այս-տեղ անհետևողական հանդես յեկավ: Այս անհետևողականության պատճառները պետք է փնտրել նրա դասակարգային բնույթի մեջ: Բուրժուազիան ծնվելով ֆեոդալական հասարակարգի ծոցում, նա ժա-ռանգեց նրա մի քանի կողմերը, վորով և խրախուսվեց 1789 թ. հեղա-փոխությունը: Բուրժուազիան սեփականատիրական դասակարգ է, ար-տադրության միջոցների տեր է, նա միաժամանակ խոշոր կալվածքների տեր է, ուստի նա առաջին հերթին սեփականության սկզբունքի անաղար-տության հարցը պիտի դներ: «Փիլիսոփայության աղքատություն» աշ-խատության մեջ Կ. Մարքսը գրում է՝

«Յուրաքանչյուր պատմական էպոխայում սեփականությունը տարբեր ձևով է զարգացել և միանգամայն հասարակական տար-բեր հարաբերությունների մեջ: Ուրեմն՝ վորոշելու համար բուր-ժուական սեփականությունը՝ դա նույնն է, թե ընդունել բուր-ժուական արտադրության բոլոր հասարակական հարաբերու-թյունների նկարագրությունը»:

Սեփականությունը ֆեոդալական հասարակության մեջ բռնել է հիմնական տեղ. նա ֆեոդալական հասարակական հարաբերությունների չափիչն է: Բուրժուական հասարակության մեջ նա նույն հիմնաքա-րի տեղն է գրավում, բայց կապիտալիստական արտադրական հարաբե-րությունների մեջ է հանդես գալիս: Բուրժուազիան իր հաղթանակի յերկրորդ օրը, սեփականությունը սրբազան հայտարարեց: Բուրժուա-զիան սեփականությունը չվերացրեց, նա միայն այլ պայմանների մեջ դրեց: Մարքսը նույն հարցի մասին գրում է.

«Անգլիական, ինչպես և ֆրանսիական հեղափոխություն-ների էպոխայում սեփականության խնդիրը նշանակում էր՝ ա-զատ մրցության պայմանների ստեղծում և ֆեոդալական բոլոր այնպիսի հարաբերությունների վերացում, ինչպիսին են ֆեո-դալական մոնոպոլիաները, համքարությունները և այլն, վո-րոնք XVI-ից մինչև XVIII դարերը զարգացող արդյունաբե-րության կապանքները դարձան: Արդյունաբերության զարգա-



ման տարբեր աստիճանների հետ կապված սեփականության հարցը, վորոշ դասակարգի համար միշտ կենսական հարց է դառնում: XVII և XVIII դարերում հարցը վերաբերվում էր ֆեոդալական սեփականատիրական հարաբերությունների վոչնչացմանը, դրա համար էլ սեփականության հարցը բուր-ժուազիայի համար կյանքի հարց է: XIX դարում, յերբ բուր-ժուական սեփականատիրական հարաբերությունների վոչնչաց-ման մասին խոսք յեղավ՝ սեփականության հարցը դարձավ պրո-լետարիատի համար կյանքի հարց»:

Բուրժուազիան ֆեոդալական սեփականատիրական ձևին էր դեմ և վոչ թե ընդհանրապես սեփականության, վորովհետև ինքը խոշոր սեփականատեր էր: Նա խորտակեց սեփականության ֆեոդալական ձևը և հաստատեց բուրժուական ձևը: Իր դեկլարացիայով և 1791 թ. սահ-մանադրությամբ բուրժուազիան թույլատրում է յուրաքանչյուր քա-ղաքացուն ազատ կերպով արտադրել, առևտուր անել, գնումներ կա-տարել, կապիտալներ-հարստություններ կուտակել: Այսպիսի իրա-վունքների հաստատումը վերջի վերջո նույն մոնոպոլիաներն և ա-ռանձնաշնորհումներն է առաջ բերում, միայն այս դեպքում բուրժուա-զիայի համար:

Ինչո՞ւ բուրժուազիան ընդունակ էր այդպիսի արմատական լո-զունգներ տալ, վորպիսիներից մեկն է նաև այս՝ «Ժողովուրդը իրա-վունք ունի ճնշմանը դիմադրել»: Սա բացատրվում է նրանով, վոր բուրժուազիան այն ժամանակ ճնշված դաս էր և հեղափոխական էր և հանդես էր գալիս միջնադարյան խավարամիտ կարգերի դեմ, այ-ինքն այն ժամանակ, յերբ նրան հակառակորդ՝ պրոլետարիատը չկար, այսինքն նրա գերեզմանափորը դեռ հանդես չէր յեկել:

XIX դարում նույն բուրժուազիան, վոր այնպես կռվում էր հա-նուն անհատի ազատության, հավասարության, ճնշումների դեմ և հե-ղափոխական ապստամբության իրավունքը սրբազան էր համարում՝ դարձավ նույն ճնշողը, շահագործողը և հետադեմը: Այս անգամ պրո-լետարիատը հանդես յեկավ նրա դեմ, օգտվելով բուրժուազիայի հե-ղափոխական լոզունգներից, բայց ավելի հետևողական, ավելի հե-ղափոխական, վորովհետև պրոլետարիատը սեփականատեր չէ, կոր-ցնելու վոչինչ չունի, բացի իր շղթաներից:

«Ճնշման դիմադրելու» սրբազան լոզունգը բուրժուազիան իր տի-րապետության ժամանակ հետ վերցրեց, իսկ նույն սրբազան իրա-վունքների ձեռք բերման համար պրոլետարիատի հանդես գալը նա չընդունեց և ամենաբռնակալական միջոցների դիմելով խեղդում է

նրա յուրաքանչյուր խոսքը, միտքը և բողոքի չիրույթները: Այդ պայքարում բուրժուազիան հենվում և այն ֆակտորների վրա, վորոնց դեմ եր դուրս յեկել մի ժամանակ՝ յեկեղեցու, զորքի, պարլամենտի, պաշտոնական գիտության և այլն:

Ելնելով այս սկզբունքներից հեղափոխության որերին կազմակերպված Ազգային և Հիմնադիր ժողովները ձեռնարկեցին հեղափոխական Ֆրանսիայի իրավահասարակական կարգը: Այդ ժողովները հանդես յեկան, վորպեսզի կառուցեն բուրժուական արտադրությունը և հաստատեն բուրժուական սոցիալ-սեփականատիրական հարաբերությունները: Թե ինչպես վերակառուցեց բուրժուազիան Ֆրանսիական պետական և որենսդրական կարգը, դա կարելի յե ցույց տալ 1791 թ. ընդունված Սահմանադրության անալիզով:

Հիմնադիր ժողովի վորոշումները տեղի ունեցան մեծ մասամբ 1791 թ. և նրանք վերաբերվում եյին յերկրի պետական ու իրավական վերակառուցմանը: Այդ այսպես կոչված Կոնստիտուցիան եր, կամ այլ կերպ ասած «1791 թ. կոնստիտուցիան»: Այդ կոնստիտուցիայի հիմնական կողմն եր իշխանության կազմակերպումը: Ըստ այդ կոնստիտուցիայի թագավորական միահեծանությունը մնում և Ֆրանսիայի իշխանության անխախտ ձևը: Յերկիրը կառավարում են թագավորը և մինիստրները, վորոնք գործադիր մարմիններ են, որենսդիր իշխանության ֆունկցիան պատկանում և ժողովրդական ներկայացուցչական ժողովին, կամ ինչպես անվանում եյին՝ Որենսդիր ժողովին: Ամբողջ որենսդրության իրավունքը պատկանում եր այդ ժողովին, իսկ թագավորը և մինիստրները գործադրում եյին: Սակայն թագավորը իրավունք ուներ վետո դնելու ընդունված որենքի վրա, այսինքն արգելելու այդ որենքի գործադրումը: Նա իրավունք ուներ կրկնելու այդ վետոն, բայց յեթե Որենսդիր ժողովը պնդում եր իր վորոշումը՝ թագավորը ցրված եր հայտարարում այդ ժողովը և նոր ընտրություններ հայտարարում: Յեթե Որենսդիր ժողովը նոր կազմով պնդեր նախորդ կազմի ընդունած վորոշումը, թագավորը ստիպված պիտի համաձայներ: Կոնստիտուցիան հաստատելով յերկրի կառավարչական ձևերը՝ անցավ յերկրի վարչական վերակառուցմանը: Նա ամբողջ Ֆրանսիան միասնական և կենտրոնացած յերկիր հայտարարեց, բաժանեց 83 դեպարտամենտների (կամ նահանգների): Դեպարտամենտների վարչական որգանները, ինչպես և դատարանը, ընտրովի պետք և լինեին և պետք և հաստատվեին ժողովրդի կողմից: Այսպիսով տեղերում վերացվեցին վարչական բազմազանությունը, դատային կիսաֆեոդալական կարգ ու կանոնները և փոխարենը հաստատվեց բուրժուա-



կան-դեմոկրատական ձևը: Վերացվեցին դասային դատարանը, վարչական այլ մարմինները և փոխարենը հաստատվեցին ընտրական մարմինները: Հիմնադիր ժողովը վերացրեց տիտղոսները, արտոնությունները, մոնոպոլիաները, ներքին մաքսատները, գավառների անկախ բաժանումները և փոխարենը հաստատեց միացյալ ազգային սկզբունքները: Այն տարբերությունը, վոր միաժամանակ կար առանձին գավառների միջև և իրար հանդեպ գործադրվող պետականության սկզբունքները, վերացվեցին: Ամբողջ պետության սահմանում յուրաքանչյուր գավառ մյուսի նկատմամբ հավասար տեղ և գրավում: Պրովանսացին, Բրետանցին և Դոֆինեցին հավասար են որենքի առաջ, այլ կերպ ասած ամբողջ Ֆրանսիական ժողովուրդը՝ որենքի առաջ: Սա հիմնական սկզբունքն եր 1791 թ. Կոնստիտուցիայի:

Սակայն մեզ անհրաժեշտ և պարզել այդ Կոնստիտուցիայի բուն եյությունը: Դեկլարացիան և Կոնստիտուցիան հիմք են վերցնում «Ֆրանսիական ազգի» շահերը, ժողովուրդը և որենքի առաջ հավասար են դարձնում բոլորին: Սակայն պատմական այդ յերկու փաստաթղթերը իրականության մեջ Ֆրանսիական ազգի բաժանումը դրին: Այսպես՝ Հիմնադիր ժողովը չընդունեց ընտրական ընդհանուր իրավունքը, դրա փոխարեն նա հաստատեց ընտրողների պասիվ և ակտիվ բաժանումը: Յուրաքանչյուր մարդ կարող եր ընտրել, յեթե 3 որվա աշխատավարձի չափ հարկ և վճարում: Վորպեսզի մի վորևե քաղաքացի ընտրվի՝ պետք և տաս որվա աշխատավարձի չափ հարկ վճարի և հողային սեփականություն ունենա: Ֆրանսիայում մոտ 26 միլիոն բնակիչ կար, վորից միայն 2.298.360 հոգի եյին ակտիվ ընտրական իրավունքից ոգտվում: Պարզ և, վոր ակտիվ իրավունք ունեցող քաղաքացիները, գյուղացիները, բանվորները և արհեստավորները, չքավոր ինտելիգենցիան չեյին և վոչ ել բարիկադներում կռվողները: Դրանք նույն հողատերերն եյին, սեփականատերերը, բուրժուազիան: Ընտրական իրավունքը Ֆրանսիայի բնակչության յերրորդ դասը բաժանեց իր բաղկացուցիչ մասերի: Ընտրական որենքների նման ձևակերպումը յելնում եր բուրժուական գաղափարախոսությունից, վորի գաղտնիքը բացեց Ազգային ժողովի նիստերից մեկում մի պատգամավորի հայտարարությունը՝ «Ով վոչ մի սեփականություն չունի, հասարակության անդամ չե: Կառավարելն ու որենսդրությունը սեփականության գործն և, այդ պատճառով ել միայն սեփականատերերն են շահագրգռված դրանցով»: Նման միտք արտահայտեց նաև Սիյեսը, նա՝ վոր յերրորդ դասի համար այնպիսի քաղաքական ազատություն եր պահանջում: Արդեն հայտնի դարձավ, վոր յերրորդ դասն անելով՝

բուրժուական իդեոլոգները բառ ելության բուրժուազիային էին հասկանում: Ազգային և Հիմնադիր ժողովները իրենց քաղաքականությամբ երկրի վարչական-կառավարման վերակառուցմամբ ապահովեցին խոշոր բուրժուազիայի տիրապետությունը:

Այժմ տեսնենք թե Հիմնադիր ժողովը ագրարային ինչպիսի քաղաքականություն հանդես բերեց:

Բուրժուազիան դառնալով Ֆրանսիայի տիրող դասակարգը՝ անմիջապես ագրարային խնդրի լուծմանը պիտի անցներ: Ագրարային խնդրի լուծումը պիտի կատարեր նա ոչ միայն իրեն շահերից ելնելով, այլ և գյուղացիական մասսայական շարժումները կասեցնելու համար: Մենք տեսանք, որ տվյալ արտադրական հարաբերությունների պայմաններում յերրորդ դասի համար ագրարային պրոբլեմի լուծումը կարևորագույն տեղ էր գրավում: Երկրի արտադրողական ուժերի զարգացումը հրամայականորեն առաջադրել էր ագրարային բարեփոխություններ կատարել, այս հիմնավորմամբ հենց բուրժուազիան անցավ այդ խնդրի լուծմանը:

Ազգային ժողովը ագրարային-գյուղացիական խնդիրների մասին մի շարք դեկրետներ հրատարակեց 1789 թ. օգոստոսի 4-ին, 6-ին, 7-ին, 8-ին և 11-ին, որոնց նա ֆեոդալական կարգերը վերացած էր հայտարարում: Այս տեսակետից ամենահետաքրքիրն է օգոստոսի 11-ի դեկրետը: Այստեղ մենք կարդում ենք, որ՝

1. Ազգային ժողովը վերացնում է վերջնականապես ֆեոդալական կարգերը: Ֆեոդալական ու ցենզի իրավունքները, որոնք վերաբերվում են անհատական կամ ինչքային ճորտատիրական իրավունքներին՝ վերացվում են առանց վարձատրման, մյուս բոլորը յենթակա յեն հետ գնման:

2. Փոքր ու մեծ աղավնանոցներ ունենալու սենյորների բացառիկ իրավունքը վերացվում է.

4. Սենյորալ ամեն տեսակի արդարադատություն վերացվում առանց հատուցման:

5. Ամեն տեսակի տասանորդները ու դրանց փոխարինող բահրաները վերացվում են: Ինչ վերաբերվում է այլ տասանորդներին, ինչ տեսակի յել լինեն դրանք, պիտի հետ գնման յենթարկվեն ժողովի կողմից որոշվելիք ձևով: Մինչ այդ վարուշումն Ազգային ժողովը հրամայում է շարունակել դրանց գանձումը.

6. Ամեն տեսակի մշտական հողային ռենտաները յենթակա յեն հետ գնման:



7. Դատական ու քաղաքային պաշտոնների վաճառքի սովորությունը վերացվում է այժմնեթ:

9. Հարկերի բնագավառում ընդմիշտ վերացվում են դրամական, անձնական, ու հողային արտոնությունները:

11. Բոլոր քաղաքացիներն առանց ծագման խտրության կարող են վարել և տանել հոգևոր, քաղաքացիական և զինվորական աստիճաններում կոչում և ոչ մի օգտակար պրոֆեսիա չպիտի զրկի ազնվական կոչումից.

14. Ազգային ժողովը հանդիսավոր հայտարարում է, որ ազատության վերականգնողը Լյուդովիկոս XVI-րդն է:

Օգոստոսի 11-ին ժողովի ընդունած այս դեկրետը յերկու կարևորագույն խնդիրներ է լուծում — 1. Վերացնում է ֆեոդալական կարգերը, արտոնությունները և օրենքի առաջ անհավասարությունը, և 2-րդ, կարևորագույն և հիմնական հարկերը վերացվում են միմիայն հետ գնման պայմանով:

Նշանակում է ֆեոդալական հասարակարգի հիմքը կազմող և գյուղացիության համար չափազանց մեծ նշանակություն ունեցող ամենակարևորագույն հարկերը չեյին վերացվում, այլ ցանկացողը պիտի հետ գներ, այսինքն գյուղացիության հիմնական մասսան դեռ շարունակելու էր հարկերի ամենածանր տեսակները վճարել, որովհետև նա ոչ մի դրամագլուխ և հնարավորություն չուներ հետ գնման միջոցով ազատվել այդ հարկերից: Բուրժուազիան այս դեկրետով հողային սեփականության հարաբերությունների մեջ առաջ բերեց լիակատար ազատություն նրանց համար, ովքեր կարող էին գնել, ծախել, կապալով հողեր վերցնել, արդյունաբերական ձեռնարկություններ հիմնել, այսինքն սեփականատերերը, ռենտյեները, խոշոր դրամատերերը, այլ կերպ ասած սեփական-արդյունաբերական բուրժուազիան: Դրությունը ծանրանում էր նաև նրանով, որ հետգնումն անմիջապես չպիտի կատարվեր, այլ յերբ լույս կտեսնեյին նոր հրահանգներ հետգնման չափը և կարգ ու կանոնը որոշելու համար:

Օգոստոսի 11-ից մոտ մի ամիս առաջ, այսինքն հունիսի 18-ի դեկրետում Ազգային ժողովը հիմք ունենալով տասանորդների մասին ընդունած հատուկ հանձնաժողովի զեկուցումը՝ առաջարկում է, որ բոլոր տասանորդ վճարողները պարտավոր են շարունակել վճարումները: Ճամպարը, արխաժը և բահրան մնում են իրենց ուժի մեջ մինչև որ հետգնվեն: Այդ դեկրետի յերրորդ կետը առաջարկում է՝ «ոչ ոք չի կարող դժվարությունը պատրվակ դարձնելով՝ հրաժարվել [illegible] վճարվող տասանորդներից, շամպարից, արխաժից և այլ պարհակներից»

Վերոհիշյալ դեկրետները վերացնելով յերկրորդական նշանակություն ունեցող հարկերը և պարհակները՝ հիմնական պարտականությունների վերացման խնդրում յերեք տեսակի միջոց են առաջարկում՝ ա) հետգնել, բ) անհատական պայմանագիր կնքել տերերի հետ, ազատվելու համար այդ պարտականություններից և փոխադարձ համաձայնության գալ և գ) փորձել հնարավոր է՝ ընտրությամբ փոխարինել դրամատուրքով կամ բնահարկով: Վերջին դեպքում հունիսի 18-ի դեկրետը արգելք է հանդիսանում, սակայն փոքր վայրերում կալվածատերերի և գյուղացիների փոխադարձ համաձայնության դեպքում Ազգային Ժողովը չի առարկում: Այս կարգի պարտականությունները մեծ մասամբ անհատական–անձնական էին, որոնց վերացումն ավելի դյուրին էր:

Այս ձևով, ինչպես և ապրիլին հրատարակված բոլոր դեկրետները հիմնականորեն դեմ էին դուրս գալիս ժողովրդական մասսաների պահանջներին: Ժողովրդական մասսաների պահանջները Ազգային Ժողովն իր հունիսի 18-ի դեկրետում ընդունում է որպես չարամիտ մարդկանց ազդեցության հետևանք: Սա ակներևույթ բացառությունն է: Սակայն Հիմնադիր ժողովի պատգամավորներից ամենահեռատեսները լավ էին հասկանում այդ պահանջների իմաստը: Պատգամավորության կազմն ամբողջությամբ բաղկացած լինելով շահագործող բուրժուական շերտերից, գիտակցաբար չէր կարող այդ պահանջներին ընդառաջել: Նրանց կարծիքով հեղափոխությունը կատարվել էր ոչ թե «անարխիա առաջացնելու, սեփականությունը վերացնելու և արդարացի պահանջներից ու իրավունքներից հրաժարվելու, այլ դրանց չոկելու, իրավականորեն կարգ ու կանոնի յենթարկելու, օրինական ձև տալու դրանց»:

Սակայն, որքան Հիմնադիր ժողովը պարզում էր իր դիրքը դեպի ժողովրդական հիմնական մասսաների պահանջները, այնքան վերջինների շարժումներն ուժեղանում էին, նրանց պահանջները և տենդենցները ավելի ցայտուն ու համարձակ էին հանդես գալիս: Գյուղացիության շարժման նոր բուռն վերելքը 1789 թ. ամառը բացատրվում է նրանով, որ հեղափոխության ժամանակ ղեկավարող մարմինը՝ Հիմնադիր ժողովը չլուծեց գյուղացիության ամենակենսական խնդիրները և պարզեց իր դիրքը: Այս ժողովը հեղափոխության ընթացքն ըմբռնեց այնպես, ինչպես այդ պարզաբանված էր դեկլարացիայի և կոնստիտուցիայի մեջ: Գյուղացիության պահանջները, որոնք արտահայտված էին ընտրական հրահանգների մեջ՝ մեծ մասամբ չէին կատարված: Այդ պահանջները, սակայն, գյուղացիության համար հեղափոխության ժամանակ մինիմալ էին դարձել: Հեղափոխու-



թյունը գյուղացիական մասսաներին նոր ուժ էր տվել, նոր դաստիարակություն և գիտակցական ավելի բարձր աստիճան, ուստի նրանք այժմ չէին կարող բավարար համարել իրենց վաղեմի պահանջները: Նրանք այժմ պահանջում էին բոլոր պարտականությունների վերացումը, յեկեղեցական և կալվածատիրական հողերի, առաջին հերթին, համայնական և այլ հափշտակված հողերի վերադարձը, հետգնումը չեղյալ համարել, այլ կերպ ասած, գյուղացիությունը պահանջում էր ֆեոդալա-կիսաճորտատիրական կարգերի ամենահեղափոխական, ամենավճռական վերացումը և ոչնչացումը, իսկ Հիմնադիր ժողովը մարդկանց ազատություն էր տալիս, բայց հողային կախվածությունը թողնում էր իր նախկին դրության մեջ:

Հիմնադիր ժողովն այդ շարժման ամենակատաղի դիմադրողը դարձավ: Երրորդ դասի ղեկավար բուրժուազիան վճռական միջոցների էր դիմում գյուղացիական շարժումները ճնշելու համար: Բուրժուազիան լավ էր ըմբռնում գյուղացիական շարժումների սոցիալական իմաստը և դրա համար էլ մոբիլիզացիայի էր յենթարկում իր և իր հետևից գնացող բոլոր ուժերը այդ շարժումները ճնշելու համար հենց իրենց բնում: Դեռ ավելին: Այդ շարժումների ծավալումը բուրժուական արիստոկրատիայի և հին կարգերի կողմնակիցների միջև մերձեցում առաջ բերեց: Առաջ յեկավ սեփականատերերի դաշն ընդդեմ նրանց, ովքեր սեփականության էին ուզում ոտնձգել և իրենց հողերն էին հետ պահանջում:

Սակայն ինչպես բացատրել, որ մինչև անգամ այդ սահմաններում բուրժուական արիստոկրատիան միացած ազնվականության հետ կատարեց նման ռեֆորմը: Այս հարցին յերկու պատասխան են տալիս հեղափոխության մարքսիստ և բուրժուական պատմաբանները: Բուրժուական պատմագրությունը մեծ հաճույքով և պաթոսով քննության առնելով այդ հարցը գալիս է այն յեզրակացության, որ ֆեոդալական կարգերի նման ձևով ու բովանդակությամբ վերացումը բխում էր հեղափոխական բուրժուազիայի և ազնվականության հետևողական ըմբռնողությունից հեղափոխության առաջադրած խնդիրների նկատմամբ, ինչպես և նրանց անձնազոհությունից և բարձր գիտակցության «Ազգային շահերի» հանդեպ: Անձնազոհության այդ ակտը տեղի ունեցավ օգոստոսի 4-ի Ազգային ժողովի նիստում, յերբ ազնվա-բուրժուական պատգամավորները մեկը մյուսի հետևից հանդես գալով առաջարկում են վեհանձն լինել հանուն ազգային շահերի և հրաժարվել արտոնություններից: Ինչպես հայտնի է այդպիսի վորոշումներին հենց հաջորդեցին օգոստոսին և հետագա ամիսներին հրատարակած դեկրետները և հրահանգները, նույն խնդրին նվիրված: Մարքսիստական

պատմագրությունը միանգամայն այլ կերպ է բացատրում այդ «անձնազոհությունը» արտոնյալների կողմից: Օգոստոսի 4-ի նիստը վորոշեց՝

1. Առանց հետգնման վճարումների՝ պետք է վոչնչացնել անձնական պարհակները և կալվածատիրական բոլոր տիպի կոռերը:

2. Այսուհետեվ հարկերը վճարում են բոլոր բնակիչները և համապատասխան յեկամուտի և

3. Ֆեոդալական իրավունքները կարող են վերացվել միմիայն հետգնման ուղիով՝ դրամով կամ արդարացի գնումով:

Նման ձեվով հարցի լուծումը նշանակում էր՝ ինչ վոր անհատական պարտականությունն է, առանց այլեվայլության վերացվում է, բայց ինչ վոր կապված է սեփականության հետ կարող է վերացվել միայն հետգնման միջոցով: Այսինքն առաջարկվում էր կատարել այն, ինչ վոր ցանկալի յեր բուրժուական արիստոկրատիայի համար: Նման իրավունքներից հրաժարվելու համար օգոստոսի 4-ի նիստում պատգամավորները կոչ էյին անում համաձայնվել և սա նրանք բնորոշում էյին անձնազոհություն հանուն ժողովրդի: Բայց ինչպես պատգամավորությունն այդ քայլը կատարեց ցավոք սրտի և մեծ դժգոհությամբ: Բայց այդ անհրաժեշտություն էր, այդ էր պահանջում գյուղացիությունը: Այդ անձնազոհությունը տեղի ունեցավ այն ժամանակ, յերբ գյուղացիությունն ինքն իր դատը վճռել էր, այսինքն կատարել էր այն, վորը ժողովի պատգամավորությունը կատարված փաստերի առաջ դրեց: Այսպիսով ազնվա-բուրժուական բլոկի այդ անձնազոհությունը հետեվանք էր գյուղացիական մասսայական շարժումների և նրա ճնշման տակ կատարվեց այդ, և վոչ թե արդյունք էր կամավոր հրաժարման: Իզուր չէ, վոր բուրժուական պատմաբանների բացատրությունն օգոստոսի 4-ի Ազգային ժողովի պատմական այդ նիստի մասին մարքսիստ պատմաբաններն առասպել են համարում:

Միրաբոն և ուրիշ հեռատես պատգամավորներն առաջինը յեղան, վոր «հրաժարվեցին» իրենց արտոնություններից: Այսպես վարվելով նրանք ուզում էյին հանգստացնել գյուղացիությունը, փրկել հեղափոխությունը կործանումից, վորից կարող էյին օգտվել արտոնյալները և անարխիստները, ինչպես անվանում էյին նրանց, ովքեր սոցիալական արմատական հարցեր էյին դնում և պահանջում անմիջապես վճռել: Հեղափոխության խորացումը վտանգ էր սպառնում վոչ միայն արտոնյալների շահերին, այլ և բուրժուազիայի: Սեփականությունը վտանգի յեր յենթարկվում: Մյուս կողմից գյուղացիությունը չէր ցանկանում հանգստանալ քանի դեռ ագրարային հարցը լուծված չէր: Օգոստոսի 4-ի նիստի վորոշումը հանգստացրեց պատգամավորներին, բայց վոչ



գյուղացիներին: Գյուղացիությունը ագրարային հարցը լուծված չէր համարում: Սեփականատերերը հանգստացան, վորովհետեվ հետգնումը իրապես նշանակում էր շարունակել սենյորի ռանձումը: Նա վոչինչ չէր կորցնում: Այսպիսով քննելով Ազգային ժողովի հրատարակած բոլոր դեկրետները և կարգադրությունները՝ ագրարային-գյուղացիական հարցի մասին՝ մենք գալիս ենք այն յեզրակացության, վոր բուրժուական արիստոկրատիան անցնելով իշխանության գլուխ ագրարային հարցը չլուծեց, նա միայն առերես լուծում տվեց նրան: Գյուղացիությունը հակառակ հեղափոխության առաջադրած սպասելիքների պետք է շարունակեր տասանորդները վճարել, հողազուրկ մնալ, հիմնական և ամենածանր հարկերը վճարելը, իրավական անպաշտպան դրության մեջ մնալ, կազմակերպված նոր կառավարության աջակցությունը չստանալ և յենթարկվել եկեղեցիայի և հարձակումների կառավարական զորքերի կողմից նրա համար, վոր նա ցանկանում է լուծել այն հարցերը, վորոնց լուծման համար հենց տապալվեց հին կառավարությունը և նորն ստեղծվեց:

Հիմնադիր ժողովը դեռ մինչեվ 1792 թ. մի քայլ անգամ չի ուզում հետ գնալ իր հրատարակած դեկրետներից: Դեռ մինչեվ 1792 թ. Ֆրանսիական գյուղում շարունակում էյին իրենց գոյությունը պահպանել մի շարք ֆեոդալական կարգեր:

Համայնքային հողերը ժողովը չվերադարձրեց գյուղացիներին, մինչեվ վոր մի նոր հեղափոխություն տեղի չունեցավ, վորի հետեվանքով միայն այդ հարցը լուծվեց: Բուրժուազիան գտնում էր, վոր գյուղացիությունը հնարավորություն ստացել է ազատվելու մի շարք պարհակներից և հարկերից հետգնման ուղիով: Սա միանգամայն չէր համապատասխանում իրականության, վորովհետեվ, փրկանքի վճարումը այնպիսի պայմաններում պետք տեղի ունենար, վոր վերջին վերջո գյուղացին չէր կարող վճարել: Հետգնման կարգ ու կանոնի մասին հրահանգները շատ ուշ լույս տեսան, վորի հետեվանքն այն էր լինում, վոր շարունակվում էր հին դրությունը պահպանվել, վորի պատճառով դժգոհությունները, ապստամբությունները, հարձակումները, կալվածատերերի և կառավարական պաշտոնյաների վրա և մասսայական խռովություններն անընդհատ շարունակվում էյին: Հետգնման կարգը գյուղացիությանը չէր բավարարում: Հետգնումը պետք տեղի ունենար փոխադարձ համաձայնությամբ, վորի հետեվանքով կալվածատերը հնարավորություն էր ստանում իր պահանջները պնդելու, վորքան էլ վոր գյուղացու համար ձեռնտու չլինեյին: Մյուս կողմից անհատական փրկանք տալն արգելվում էր: Փրկանքը պետք է վճարեյին բոլորը միասին: Փրկանքի չափը շատ բարձր էր, այն աստիճան, վոր անհնար էր

լինում վճարել: Յուրաքանչյուր դեպքում գյուղացին պիտի փաստաթղթերով ապացուցեր իր իրավունքը, որը շատ դժվար էր կատարել, որովհետև ամբողջ իշխանությունը չէր ընդառաջում դրան, իսկ մյուս կողմից փաստաթուղթ ձեռք բերելու համար, գյուղացին պետք է դիմեր կառավարական պաշտոնյային և կալվածատիրոջը, որովհետև դրանենյակը կալվածատիրոջ տրամադրության տակ էր գտնվում, որի հետևանքը լինում էր մերժումը, ձգձգումը և կեղծումը: Միաժամանակ վարչական և ռազմական մեթոդների գործադրումը գյուղացիության դեմ, հարկահավաքման և ժողովի կողմից հաստատված կարգ ու կանոնի պահպանման համար պայքարը եռանդուն կերպով շարունակվում էր: Այսպիսով ագրարային—գյուղացիական հարցի լուծումը, միանգամայն պարզորոշ կերպով հանդես բերեց Հիմնադիր ժողովի բուրժուական դեմքը: Բուրժուազիան այդ քաղաքականությամբ ապահովեց իր սեփականատիրական դերը: Նա պարհակների խոշոր մասը կալվածատիրական ունեցվածքի վերածեց, պահանջելով հետադարձ դեպքում խոշոր փրկանք: Նա միաժամանակ կոնֆիսկացիայի ենթարկելով հոգևորականության և ազնվականության մի մասի, մեծ մասամբ տարագիրների հողերը, կազմեց ազգային հողային ֆոնդ, որի մեծ մասը գրավեց ինքը:

Այժմ անցնենք Հիմնադիր ժողովի բանվորական քաղաքականության խնդրի քննությանը: Մենք տեսանք, թե ինչ էր իրենից ներկայացնում Ֆրանսիայի բանվորությունը, որպես դասակարգ և հեղափոխական ուժ: Մենք միաժամանակ տեսանք, որ նա գործադուլներ էր կազմակերպում և քաղաքական-հասարակական շարժումներին մասնակցում՝ նպատակ ունենալով բանվորական հարցի լուծումը օրակարգի հարց դարձնել: Հեղափոխության ժամանակ նա ակտիվ ուժ էր հին կարգերի դեմ կռվելու համար: Նա զինված ուժ դարձավ Փարիզում և մի շարք արդյունաբերական քաղաքներում: Նա մասնակցեց բոլոր ելույթներին ֆեոդալական իշխանության դեմ: Բաստիլի գրավման ժամանակ նա ամենաակտիվ և հարձակողական ուժն էր: Փարիզում առանց բանվորական շերտերի մասնակցության և ուժի օգտագործման ոչ մի դեպք տեղի չունեցավ: 1789–91 թ. թ. սուր կրիզիս տեղի ունեցավ, որը ավելացրեց գործադուլների թիվը: 1791 թ. գործադուլ արին տպագրական բանվորները, գործադուլ կազմակերպեցին նաև կառուցողները: Հիմնադիր ժողովի առաջին գործն այն եղավ, որ գործադուրկ բանվորների համար հասարակական աշխատանքներ կազմակերպեց և արհեստանոցներ բաց արավ: Գործ ստացած բանվորությունը պետությունից էր ստանում աշխատավարձ: Սակայն նրան այդ չէր բավարարում: Փարիզի բանվորությունը բավարար աշխատավարձ և պարեն էր պա-



հանջում: Մինչդեռ սպեկուլյանտները և առևտրականները խոշոր ձեռնարկումներ էին կատարում և մեծ հարստություն դիզում: Փարիզի և մեծ քաղաքների բանվոր-արհեստավորական մասսան ամենաանհրաժեշտ մթերքների կարիքն էր զգում: 1791 թ. կիսից սկսած անտեսական վերելք տեղի ունեցավ: Աշխուժացան շինարարական աշխատանքները և բանվորական ձեռքերի կարիքը զգալի դարձավ: Գործադուլների առաջն առնելու համար, ինչպես և ապա բանվորական ուժ գտնելու համար ժողովը փակում է ազգային արհեստանոցները և վերացնում հասարակական աշխատանքները: Սրա հետևանքը եղավ գործադրկության աճումը, բանվորական ուժի առաջարկի շատացումը և ընդհանրապես բանվորության անտեսական դրության վատացումը:

Մենք տեսնում ենք, որ հեղափոխությունից հետո հեղափոխությանը մասնակցած մի ուրիշ հիմնական շերտը՝ բանվորությունը անտեսապես ավելի վատթար դրության մեջ ընկավ: Այսպիսի պայմաններում բանվորությունը, հատկապես Փարիզի բանվորությունը չէր կարող շարժումներ և խռովություններ առաջ չբերել: Հիմնադիր ժողովը միջամտում է այդ դրությանը, որն արտահայտվում է նրանով, որ ժողովի պատգամավոր բուրժուա Լը-Շապելյեյի նախագահությամբ մի հանձնաժողով է ընտրում քննելու բանվորական շարժումների պատճառները և այդ մասին օրինագիծ առաջադրելու ժողովին:

Լը-Շապելյեյի հանձնաժողովը ժողովի նիստերից մեկում հանդես է գալիս զեկուցումով, որի հետևանքն է լինում մի օրինագծի ընդունումը: Օրինագծի հիմնական կետերը մեզ ցայտուն պատկեր են տալիս Հիմնադիր ժողովի բանվորական քաղաքականության մասին: Ըստ այդ օրենքի պետության մեջ արգելվում են կորպորացիաները, միությունները և ընդհանուր դիմադրությունը:

> «... Չկան մասնավոր շահեր, կա միայն ընդհանուր շահ: Ոչ մի քաղաքացու չպետք է թույլ տրվի պայմանադրություն կնքել իրենց խմբակային շահերի վերաբերմամբ, կորպորացիաների միջոցով բաժանվել հասարակությունից»:

Սա նշանակում է, որ չի թույլատրվում բանվորական կազմակերպություններ հիմնել: Ճիշտ է, օրենքը չի թույլատրում այդ անել նաև ձեռնարկուներին, սակայն վարձվողները միանգամայն առանց պաշտպանության են մնում վարձողների հանդեպ: Օրենքը գտնում է, «որ միևնույն պրոֆեսիայով կամ արհեստով զբաղվող քաղաքացիները, ձեռնարկուներն ու խանութպանները, որևէ արհեստով զբաղված բանվորներն ու վարպետները՝ իրավունք չունեն ժողովվելով ընտրել նախագահներ, քարտուղարներ և գործավարներ, կազմել ցուցակներ և

խորհրդակցություններ, ընդունել վորոշումներ և իրենց յերևակայական ընդհանուր շահերի մասին անել վորևէ կարգադրություն»: Որենքը մինչև անգամ սահմանադրության դեմ է համարում նման հավաքումները: Իրենց հերթին վարչական մարմինները պիտի հրաժարվեն նման կազմակերպություններին աջակցելուց, նրանց դիմումներ կամ խնդիրներ ընդունելուց: Նման կազմակերպությունների մեջ միացողները «յենթարկվում են դատի, վոստիկանական դատարանին և դատապարտվում են 500 լիվր տուգանքի, զրկվում են ակտիվ քաղաքացու բոլոր իրավունքներից և մի տարով նախընտրական ժողովներին մասնակցելու իրավունքից»: Յեթե ակտիվ արտահայտություններ հանդես գան՝ սպառնալիքներ, թռուցիկներ տարածել և այլն՝ նախաձեռնողները յենթարկվում են 100 լիվր տուգանքի և յերեք ամսյա բանտարկության:

Այսպիսով Լը-Շապելյեի որենքըն ամբողջապես ուղղված է բանվորության դեմ, վորովհետև դրանք եյին, վոր հուսահատված իրենց անյելանելի դրությունից դիմում եյին պայքարի այդպիսի մեթոդների: Բանվորական ոգնա աշխատավարձի և նյութական դրության կանոնավորման ու բարելավման մեջ կառավարությունը չի խառնըվում: Ժողովը դա մասնավոր գործ է համարում, իր իրավասությունից դուրս գործ:

Բանվորը մնում է ձեռնարկուի հետ ազատ հարաբերությունների մեջ: Գոյություն ունեցող վարձակալության միակ ձևը անհատական ազատ հարաբերությունն է մնում: Ըստ Շապելյեի հանձնաժողովի կարծիքի դեկլարացիայի հիմունքներին դեմ է գնում նա, ով խնդիր կամ պահանջ է ներկայացնում վորոշ խմբի կողմից ձեռնարկատերերին այս կամ այն հարցը վորոշելու համար: Նրա կարծիքով ազատ հանրապետության մեջ անհատի ազատությունը պիտի իշխի, իսկ դա խախտվում է, յերբ բանվորները պահանջներ են ներկայացնում: Այն ժամանակվա բանվորությունը թույլ եր գիտակցում իր դասակարգային շահերը, նրան ղեկավարում են մանր-բուրժուական, մեծ մասամբ ռադիկալ ինտելիգենցիան, նրա համար էլ նրանց յելույթները, պահանջները պայքարի ձևերը, դեռ կազմակերպված դեմք չունեյին, բայց և այնպես դժգոհության նման արտահայտությունները վախեցնում եյին բուրժուազիային, մանավանդ, յերբ տնտեսության վերելքի տարիներում գործադուլները սովորական յերևույթներ դարձան: Ժողովի պատգամավորներն իրենց յելույթներում, ժուռնալիստներն իրենց որգաններում և ձեռնարկատերերը բանվորներին համարում եյին եգոիստներ, անարխիստներ և նրանց դեմ հասարակական կարծիք եյին ստեղծում: Միայն Ժան-Պոլ Մարատն եր, վոր համարձակություն ունեցավ բանվորության



կողմն անցնելու, նրա շահերի պաշտպանը դառնալու և իր պաշտպանության տակ վերցնելու նրանց ընդդեմ շահագործողների:

Այսպիսով՝ ինչպես ագրարային, այնպես էլ բանվորական հարցում Հիմնադիր ժողովը ցույց ավեց իր իսկական բուրժուական բնույթը: Լը-Շապելյեն այն ժամանակվա բուրժուական արիստոկրատիայի հայացքի արտահայտիչն եր բանվորական հարցում: Բուրժուազիան ժողովում անցկացրեց մի որենք, ըստ վորի ձեռնարկատերերը միանգամայն ազատ են աշխատանքի հարաբերությունների մեջ, ազատվում են նրանց բանվորության ակտիվ արտահայտություններից ձեռնարկության մեջ և միաժամանակ նրանք վարձակալության խնդրում լիակատար ազատություն են վայելում: Ինչպես ագրարային, այնպես էլ բանվորական հարցը բուրժուա-արիստոկրատական կառավարությունը իր գործունեյության ժամանակամիջոցում՝ այսինքն՝ 1789–92 թ. թ. հիմնականորեն չլուծեց:

1789-92 թ. թ. հրատարակված դեկրետները, հրահանգները և կարգադրություններն արտահայտեցին բուրժուազիայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Հատկապես դեկլարացիան, 1791 թ. ընդունված սահմանադրությունը և ագրարային ու բանվորական հարցերը բուրժուական արիստոկրատիայի իշխանության հաստատման ու ամրացման հիմունքներն եյին: Իր այդպիսի քաղաքականությամբ բուրժուազիան խորտակելով հին կարգերի դասային սիստեմը՝ կառուցեց բուրժուական միապետությունը, իր իշխանությունը, վորի հետևանքն յեղավ նրա կազմակերպվելը վորպես դասակարգ: Ֆրանսիական Մեծ Հեղափոխության առաջին ետապում բուրժուազիան հիմք դրեց իր դասակարգային իշխանության: Այդ իշխանության սկզբունքները հիմք և որինակ դարձան այլ յերկրների բուրժուազիայի համար: Հատկապես դեկլարացիան բուրժուական ազատության մանիֆեստն եր, վորի հրատարակումը մեծ հրճվանք առաջ բերեց Յեվրոպայի հին հասարակության մի ճակատում՝ բուրժուազիայի շարքերում և ատելություն ու հուզմունք մյուս ճակատում՝ ազնվականության, ճորտատեր կալվածատիրության շարքերում: Ազատության և հավասարության լոզունգները, ինչպես և քաղաքացիական հավասարությունը Յեվրոպայի այլ յերկրներում ճնշված բուրժուազիայի հեղափոխական վերելքի սկզբնավորությունը դարձան:

Բուրժուական հեղափոխության իմաստն եր,— վոր հետագայում որինակ դարձավ այլ յերկրների բարձրացող բուրժուազիայի համար,— վերացնել բոլոր խոչընդոտները, վորոնք խանգարում եյին տնտեսական ազատ վերելքը: 1790 թ. մարտին հրատարակված մի դեկրետով վերացվեց համքարությունը: Հետագայում վերացվեցին բոլոր տիպի

մոնոպոլիաները, կորպորացիաները, պետական ռեգլամենտացիան, մանուֆակտուրային տեսչությունը, պետական չինովնիկների անտեղի միջամտությունները առևտրական և արդյունաբերական հարաբերությունների մեջ: Հեղափոխությունը վերացրեց ներքին մաքսերը, հաստատեց ներքին ազատ առևտրական-ապրանքային հարաբերությունները իսկ 1790 թ. ապրիլի 29-ի դեկրետը վերացրեց հացի առևտրի սահմանափակումները և հաստատեց հացի ազատ առևտուր: Առևտրա-արդյունաբերական հարաբերությունների մեջ որպես հետևանք վերահսկյալ քաղաքականության՝ հաստատվեց մրցումը, անհատի ինիցիատիվան, ազատ գործունեությունը, այսինքն իրականացան ֆիզիոկրատների տեսակետները: Հեղափոխական այս ռեֆորմները տնտեսապես և քաղաքականապես ուժաթափ արին հին կարգերի տիրող դասին՝ ազնվականությանը:

Անհրաժեշտ էր տնտեսապես և քաղաքականապես թուլացնել նաև արտոնյալ մյուս շերտին՝ հոգևորականությանը: Ազգային ժողովը կոնֆիսկացիայի ենթարկեց եկեղեցական հողերը և փող կազմեց, որի մեծ մասը գնեց բուրժուազիան: Բայց նա այս հարցում անհետևողական գտնվեց, նա չվերացրեց տասանորդները, այլ հետգնման կարգը սահմանեց, դրա փոխարեն վերացրեց մի շարք անձնական պարտականություններ, որոնք դրված էին գյուղացիների վրա: Ազգային ժողովը հոգևորականությանը ստիպեց ճանաչել սահմանադրությունը, սակայն նա եկեղեցին պետությունից չբաժանեց, նա միայն որպես արտոնյալ դաս նրան ոչնչացրեց:

Հիմնադիր ժողովն ամբողջությամբ բաղկացած էր բուրժուական և քիչ թվով մանր բուրժուական պատգամավորներից: Ժողովի նման կազմի գոյությունն էր, որ ապահովում էր բուրժուական արիստոկրատիայի սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը հեղափոխության առաջին ետապում: Սակայն հարց է առաջ գալիս, այդ ժամանակ քաղաքական-կուսակցական ի՞նչ կազմակերպություններ կային:

Ֆրանսիական հեղափոխության տվյալ ետապում կուսակցություններ մեր հասկացողությամբ գոյություն չունեին: Չի կարելի ասել, որ ժողովի պատգամավորները բաժանված էին ըստ կուսակցությունների: Կուսակցությունը որպես մի որևէ դասակարգի քաղաքական կազմակերպություն իր ծրագրով, տակտիկայով և աշխարհայացքով հանդես եկավ XIX դարում, սակայն նրա տարրերը և կազմակերպչական արտահայտությունները գոյություն ունեին դեռ XVIII դարի վերջին: Կուսակցությունների դերն այն ժամանակ կատարում էին ակումբները, որտեղ քննության էին առնվում հուզող բոլոր հարցերը



և որոնց շուրջը համախմբվում էին միևնույն տեսակետները բաժանող անհատները և խմբավորումները:

Հիմնադիր ժողովի պատգամավորությունը չբաժանելով կուսակցությունների, սակայն, կարելի յե որոշ խմբավորումների վերածել, հիմք ընդունելով մեծ մասամբ նրանց դիրքը և տեսակետները հանդեպ կառավարչական ձևի և տարվող ռեֆորմների: Հիմք վերցնելով այս սկզբունքը՝ մենք մոտավորապես հետևյալ խմբավորումների կբաժանենք պատգամավորներին.—

1. Ծայրահեղ միապետականներ, այլ կերպ ասած ծայրահեղ աջեր. դրանք բարձր ազնվականությունն և հոգևորականությունն էին, վորոնք չէին հաշտվում կատարվող դեպքերի հետ և ձգտում էին վերականգնել հին կարգերը և իրենց արտոնությունները: Նրանք կատաղի թշնամական վերաբերմունք ունեին Փարիզի հեղափոխական մասսայի հանդեպ և իրենց մամուլում անընդհատ հարձակումներ էին գործում հեղափոխության դեմ: Լյուդովիկոս XVI-ը հենվում էր դրանց վրա և նրանց միջոցով ձգտում էր հեղաշրջում առաջ բերել:

2. Չափավոր աջեր. դրանք փոքրաքանակ էին, բայց բավականին ազդեցիկ խմբակ էին: Այս խմբակի ներկայացուցիչներն էին խոշոր ֆինանսիստները, առևտրականները և գործարանատերերը, վորոնք հեղափոխությունից վախենում էին և աշխատում էին սանձահարել Փարիզի հեղափոխականներին, բայց նրանք ռեֆորմներ էին պահանջում: Այս հոսանքը նույնպես միապետական տեսակետներ էր պաշտպանում, բայց պահանջում էր կենտրոնացած և ուժեղ կառավարություն: Թագավորի կողքին նրանք պահանջում էին հաստատել սենատ, վորը պիտի բաղկացած լիներ բուրժուական արիստոկրատիայից, այլ կերպ այս հոսանքը կարելի յե անվանել սահմանադրական-միապետական, վորի անվամբ նրանք ունեին իրենց ակումբը: Նրանց առաջնորդն էր իրավաբան Մալե-Դյու-Պանը, վորը հրատարակում էր «Ֆրանսիական Մերկուրիուս» թերթը:

3. Ազգային ժողովի ամենաուժեղ և ազդեցիկ հոսանքն էր, այսպես կոչված սահմանադրականների խմբավորումը, վորը այժմյան պառլամենտական տերմինով կարելի յե հավասարեցնել կենտրոնին: Այս խմբավորումը նույնպես միապետական էր, բայց առաջադրում էր խիստ սահմանափակված թագավորական իշխանություն: Այս խմբավորումը աշխատում էր իրականացնել խոշոր բուրժուազիայի իղձերը, այն բուրժուազիայի, վորն իրեն առերես հեղափոխական ձևացրեց, Ազգային ժողովում հանդես եկավ թագավորի դեմ Միրաբոյի ղեկավարությամբ

և մեծ պաթոսով հրաժարվեց իր արտոնություններից օգոստոսի 4-ի հայտնի նիստում: Նրա ղեկավարներն էին՝ զինվորական Լաֆայետը, Միրաբոն, Բառնավը, Լը-Շապելյեն, Սիեյեսը և այլն: Այս խմբավորման օրգանն էր «Պրովանսի Սուրհանդակը», որն հեղափոխության սկզբին հաշտվողական դիրք էր բռնել կատարվող դեպքերի հանդեպ, սակայն, որքան խորանում էին դեպքերը, նա այնքան թշնամական էր տրամադրվում դեպի հեղափոխությունը, որի հետևանքը յեղավ հեղափոխության թշնամիների կազմն անցնելը:

4. Ժողովն ուներ նաև ռադիկալ կամ ձախ խմբավորում, որի հայացքներն հանգում էին ավելի հետևողական-պառլամենտական սկզբունքին, նրա ղեկավարներն էին՝ Պետյոնը, Բյուզո, Բրիսսոն,- որոնցից ավելի ձախ էր կանգնած Մաքսիմիլյան Ռոբեսպիերը: Այս խմբավորումը մի քանի օրգաններ ուներ, որոնցից ամենաազդեցիկն էր «Ֆրանսիայի Հայրենասերը»: Այս թերթ կատաղի հարձակումներ էր գործում թագավորական իշխանության, ինչպես և վերոհիշյալ աջ կուսակցությունների վրա: Նա պահանջում էր չընդունել յերկպալատային սիստեմը և մերժել թագավորի բացարձակ իրավունքները, վետոյի իրավունքը և այլն: Այս խմբավորումն ավելի լեր հաշտվում հեղափոխության հետ, սակայն տագնապ էր ապրում, տեսնելով մասսաների աստիճանական հեղափոխականացումը, որ նրանց տեսակետով լավ բան չի խոստանում:

Սրանք էին այն խմբավորումները, որ կային Ազգային Ժողովում և որոնց շուրջը համախմբված էին Ժողովից դուրս գտնվող քաղաքականությամբ ապրող հասարակությունը: Փարիզի ծայրահեղ հեղափոխական մասսան՝ բանվորությունը և արմատական ինտելիգենցիան վորոշ կազմակերպություն չունեյին հեղափոխության այդ էտապում: Նրանց և այլ ձախ ու չափավոր խմբավորումների միջև տարբեր շահեր դոյություն չունեյին: Գոնե այսպես էր մեկնաբանում բուրժուազիան, ցանկանալով հեղափոխական մասսային իր շուրջը համախմբել, թեքել նրանց ավելի արմատական հայացքներից դեպի չափավորը, նրանց միջոցով կանգնեցնել հեղափոխության խորացումը և ուժեղ բռունցք կազմակերպել նրանց դեմ, վորոնք ձգտում էին ռեստավրացիա կատարել: Սակայն վորքան մոտենում ենք հեղափոխության յերկրորդ էտապին և դեպքերի զարգացման, այնքան ավելի ու ավելի յե լսելի դառնում այս հոսանքի ձայնը և կազմակերպվելու ավելի ու ավելի ուժեղ ձգտում է հանդես գալիս:

Հեղափոխության այս էտապում յերկու մարդկանց ձայնը ավելի լսելի դառնում, իսկ նրանց թերթերը աստիճանաբար դառնում են մասսաների կազմակերպման նշանաբանը: Մեկը Ժան-Պոլ Մարատն էր իր «Ժողովրդի Բարեկամ» թերթով, մյուսը Կամիլ-Դեմուլենը իր «Ֆրանսիայի և Բրաբանտի հեղափոխություն» թերթով: Մարատն ամենաընկճված ու չհաշտվող շերտերի շահերի պաշտպանությունն էր տանում ընդդեմ սպեկուլյանտների, առևտրականների, ազնվականների և թագավորի ու նրա ագենտների: Դեմուլենն աղքատ և անգործ ինտելիգենցիայի անունից էր խոսում, այն ինտելիգենցիայի, վոր բոլոր դեպքերի և շարժումների ավանգարդն է հանդիսանում: Այն ժամանակ ամենաազդեցիկ ակումբը Ժակոբինների ակումբն էր: Մի ժամանակ այդ ակումբը պառլամենտական շերտերից էր բաղկացած, մինչև անգամ նրան անդամ էր Լաֆայետը: Ժակոբինների ակումբն աստիճանաբար ձևակերպվում էր վորպես մանր բուրժուական դեմոկրատիկ շերտերի կազմակերպություն, վորի պատճառով նրանից հեռանում էին չափավոր և աջ տարրերը: Այսպես 1791 թ. Լաֆայետը հեռացավ ակումբից և այլ պատգամավորների հետ միասին կազմեց «1789 թ. միություն» անունով ակումբը: Գործում էր նաև մի այլ ակումբ՝ վորպես Ժակոբիններից ավելի ձախ՝ Կորդելիերների ակումբը: Վորքան մոտենում ենք 1792-93 թ. թ., այնքան շերտավորումն արագանում է հասարակության զանազան հոսանքների և ակումբների մեջ և ավելի են ձևակերպվում քաղաքական խմբավորումները: Մի բևեռում՝ թագավորի շուրջը վերջիվերջո համախմբվում են լեգիտիմիստները, ռոյալիստները, հակահեղափոխականները, մյուս բևեռում հեղափոխական ուժերը: Իրենց հերթին բյուրեղանում և ձևակերպվում էին խմբավորումները:

Փարիզը բաժանվում էր թաղամասերի: Մի քանի թաղամասերում կենտրոնացած էր բուրժուազիան. այդ թաղամասերը աչքի էին ընկնում իրենց շքեղությամբ և մաքրությամբ: Դեռ հեղափոխությունից առաջ, ինչպես և հեղափոխության ժամանակ կառուցվել էին բազմաթիվ շքեղ դղյակներ, պալատներ և տներ: Այս մասում գտնվում էր հարուստ բնակչությունը, վորը թշնամաբար էր տրամադրված դեպի բանվորա-արհեստավորական թաղամասերը: Բանվորական թաղամասերը նեղ էին և կեղտոտ: Բանվորական աչքի ընկնող թաղամասն էր Սենտ-Անտուանը: Բանվորական թաղամասերում, ինչպես և Պալե-Ռոյալ այգում և կաֆեներում հեղափոխության օրերին անընդհատ ժողովներ էին տեղի ունենում և հարցեր քննության յենթարկվում: Այդ թաղամասերում էր հրջում Մարատը, Պալե-Ռոյալում հատկապես Դեմուլենը, ագիտատորները և այլն: Մինչդեռ բուրժուական թաղամասերում զինված զորությունն էր տիրում և հսկում էր բուրժուական գվարդիան, բանվորական թաղա-

մասերում հսկում էր բանվորական զվարթերին և մինչև ուշ գիշերները շարունակվում էին ժողովները և վիճաբանությունները: Հեղափոխության վտանգի րոպեներին առաջին անգամ բանվորական թաղամասերում էր հնչվում «դեպի զենք» կոչը և անմիջապես նոր ուժերի և գվարդիայի մոբիլիզացիա տեղի ունենում: Բաստիլի գրավման գրոհը Դեմուլենի ղեկավարությամբ բանվորական թաղամասերից սկսվեց: Մարատը շըրջում էր բանվորական թաղամասերում, մասնակցում էր վիճաբանություններին, ծանոթանում էր բնակչության կարիքների հետ և հետևյալ որը պարզաբանում էր իր թերթի էջերում: «Ժողովրդի բարեկամը» իսկապես ժողովրդական մասսաների հեղափոխական օրգանն էր: Այդ թերթը տարածվում էր միայն բանվորական թաղամասերում: Բուրժուազիան իր հերթին մի առանձին ատելություն էր տածում դեպի Մարատը և նրա թերթը. նա ամեն կերպ աշխատում էր վարկաբեկել Մարատին: Մարատի օրգանը հեղափոխության այս էտապում դեռ այն դերը չէր խաղում, որպիսին նա խաղաց 1792 թ. և հետո: Նա դեռ շատ անգամ ընդհանուր բողոքներ էր տալիս և զգուշացնում մասսային «անարխիստներից», որոնք նրա կարծիքով նրանք էին, որոնք ավելի արմատական և հեղափոխական լոզունգներ էին տալիս մասսաներին ու գրգռիչ ճառեր էին արտասանում արտոնյալների հասցեյին: Ընդհանրապես հեղափոխական մասսայի կողմից այդ ժամանակ դեռ փոքր վստահություն կար դեպի թագավորը, մինիստրությունը և բուրժուազիայի առաջնորդները: Միրաբոն, Լաֆայետը և ուրիշները հեղափոխության առաջնորդներ էին համարվում և վստահություն էին վայելում: Մարատը զգուշացնում էր իր ընթերցողներին այդ աստիճան չվստահել այդ մարդկանց: Նա կասկածում էր նրանց հավատարմության վրա և մի երկու տարի չանցած պարզվեց, որ նա ճիշտ է: Միրաբոն, Լաֆայետը և շատ շատերը կաշառված էին թագավորի կողմից և կարճ ժամանակից հետո անցան հեղափոխության թշնամիների կողմը: Ռոբեսպիերը այդ ժամանակ դեռ անծանոթ և մի համեստ պատգամավոր էր Ազգային ժողովում, բայց որքան զարգանում էին դեպքերը, այնքան նրա ձայնը ավելի լսելի դառնում և նրա դերն ավելի մեծանում, որպես հեղափոխության առաջնորդ:

Հեղափոխության մտքի զարգացման վրա մեծ ազդեցություն էր գործում նաև մամուլն և գրականությունը: Հատկապես 1791 թ. այնպիսի մեծ քանակությամբ բրոշյուրային գրականություն ու նոր թերթեր բակեցին լույս տեսնել, որ չափազանց սպառնալից ուժ դարձավ թե մեկ և թե մյուս կողմի համար: Հետադեմ մամուլը պաշտպանում էր թագավորին, մինիստրներին և կոչ էր անում փակել, արգելել «անարխիստական» մամուլի հրատարակումը: Ձախ թեվի մամուլը և հատկապես Մա-



րատի օրգանը, ավելի գրգռում և սրում էին հասարակության միտքը: Այս թերթերում տպագրվող ծաղրանկարները թագավորի և նրա արքունականների հասցեյին խորը վիրավորանք էր պատճառում ռեակցիոն մամուլին և տարրերին: Փարիզի քաղաքագլուխ Բային փորձեց Մարատին դիսկրեդիտացիայի յենթարկել, հանձնել նրան դատի և թերթը փակել, սակայն Փարիզի բնակչությունն այնպիսի աղմուկ բարձրացրեց, և այնպես հուզեց այս լուրը մասսային, որ Բային նահանջեց և միայն զգուշացրեց Մարատին:

Ազգային կամ Հիմնադիր ժողովի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը միանգամայն պարզեց կառավարության և ժողովի բուրժուական դեմքը: Բուրժուազիան մեծ մասամբ գոհ էր այդ քաղաքականությունից: Դժգոհ էր նրա միջին մասը, հատկապես առևտրա-արդյունաբերական բուրժուազիան և նրա ղեկավարները, որոնք հանձին այդ ռեֆորմների արիստոկրատիայի իշխանության ամրացումն էին տեսնում: Վերոհիշյալ դժգոհ էին թագավորը, նրան շրջապատողները և ամբողջ արտոնյալ դասը: Առանձնապես պարզվեցին նաև գյուղացիության, արհեստա-բանվորական և չքավոր ինտելիգենցիայի դժգոհության արմատները: Բուրժուազիան հեղափոխությունը վերջացած էր համարում: Թագավորը առերես համաձայնվելով այդ ռեֆորմներին, գաղտնի աշխատանք էր տանում հեղափոխությունը խեղդելու. նրան այդ գործում օգնում էին երկրում մնացած արտոնյալները, Կոբլենցում հավաքված տարագիրները և յեվրոպական ռեակցիոն պետությունները: Այս հողի վրա զարգանում էին դեպքերը:

Ազգային ժողովի դեկրետները թագավորը չէր ուզում ստորագրել, նա հայտարարեց, որ «յես յերբեք չեմ համաձայնվի կողոպտել իմ ազնվականությանը և հոգևորականությանը»: Թագավորը, կառավարությունը և ամբողջ արտոնյալ դասը իրենց հույսը չէին կորցրել հին դրությունը վերականգնելու համար: Նրանք գաղտնի և համառությամբ հակահեղափոխություն էին պատրաստում: Հոկտեմբերի 1-ին Վերսալում մինչև անգամ հակահեղափոխական ցույց տեղի ունեցավ: Այս ամբողջ պատմությունը հասավ ժողովրդին և մեծ հուզմունք առաջ բերեց: Ժողովուրդը հատկապես գրգռվեց, յերբ իմացավ, որ թագավորը դեկրետները չի ուզում ստորագրել: Նա թագավորի այս քայլը ոչ թե դավաճանության համարեց, այլ ռոյալիստների կողմից կատարված մի քայլ, որին թագավորը ստիպված է յեղել յենթարկվելու: Հոկտեմբերի 5-ին Փարիզի փողոցները լցվեցին հեղափոխական մասսայով, մեծ մասամբ կանանցով և գրոհ տալով առաջ շարժվեցին դեպի Վերսալը, որտեղ

տարում էին Թագավորը և Թագուհին և վորտեղ աշխատում էր Հիմնադիր Ժողովը: Ժողովուրդը Թագավորից և Ժողովից պահանջեց քաղաք տեղափոխվել: Այդ գրոհը վախեցրեց թե Թագավորին և թե Ժողովին: Լաֆայետը հանդես յեկավ իր զորքով և իր պաշտպանության տակ վերցրեց Թագավորին: Ժողովուրդը առաջին անգամ դեպի Լաֆայետը անվստահություն զգաց, բայց դեպքերն այնպես զարգացան, վոր նա չեր կարող լրիվ յեզրակացություն հանել Լաֆայետի վերաբերյալ: Անմիջապես հայտարարվեց, վոր Թագավորը ցանկանում է Ժողովրդի հետ խոսել, վոր նա համաձայն է Ժողովրդի հետ, և վորպես հեղափոխության կողմնակից համաձայն է քաղաք տեղափոխվել: Ժողովրդի բուռն ովացիաների տակ Թագավորական տունը և Հիմնադիր Ժողովը քաղաք տեղափոխվեցին: Թագավորը և Ժողովը տեղափոխվելով Փարիզ իրապես հեղափոխական մասսայի հսկողության տակ ընկան: Բուրժուազիան ոգտագործեց այդ շարժումը ռոյալիստների դեմ: Թագավորը և նրա կողմնակիցները նման մանյովր կատարելով ցանկացան ժամանակ շահել, իսկ Ժողովուրդը ցույց տվեց իր ուժը, վորին հաշիվ չեյին կարող առնել Թագավորը և Ժողովը: Հոկտեմբերի 5–6-ի դեպքերը հակահեղափոխականներին ստիպեցին ավելի զգույշ լինել, բայց արագացնել ռեստավրացիա կատարելու աշխատանքները: Տարագրումը դեպի Կոբլենց ավելի ուժեղացավ: Արդեն 1791 թ. բավականին մեծ ուժեր եր կուտակվել Կոբլենցում: Կոբլենցում հավաքված բարեկամների խորհուրդով Թագավորը 1791 թ. հունիսի 20-ի գիշերը գաղտնի փախավ Վարեն, բայց ճանապարհին նրան ճանաչեցին, ձերբակալեցին և քաղաք վերադարձրին: Այս փախուստը մեծ նշանակություն ունեցավ Ժողովրդի համար Թագավորին ճանաչելու տեսակետից: Նա այժմ հավատաց, վոր Թագավորը հեղափոխության իսկական թշնամին է, դավաճան է և արժանի գահընկեցության: Ժողովուրդը նորից փողոց դուրս յեկավ: Նա 1791 թ. հուլիսի 17-ին Կորդելիերների ակումբի նախաձեռնությամբ հավաքվեց Մարսյան դաշտը և հանդիսավոր արարողությամբ հանրագիր ներկայացրեց Թագավորին գահընկեց անելու համար: Բուրժուազիան վախեցավ դեպքերի նման զարգացումից. նա Թագավորին անմեղ հայտարարեց, փախուստը չարամիտ մարդկանց գործը համարեց և իր պաշտպանության տակ առավ նրան: Հեղափոխական ինտելիգենցիան՝ Մարատը, Դեմուլենը, Ռոբեսպիերը, Սեն-Ժյուստը, Դանտոնը և ուրիշները կոչ եյին անում խորտակել Թագավորական իշխանությունը և հանրապետություն հաստատել: Ինչ եր պահանջում հանրագիրը՝



....«Ազգի ներկայացուցիչներ!

Կատարվել է մի մեծ վոճրագործություն: Լյուդովիկոս XVI-ը փախչում է, նա անարժան կերպով լքեց իր դիրքը, պետությունը հազիվ ազատվեց անարխիայից: Պետության բոլոր սեկցիաները միանգամից պահանջում են, վորպեսզի Լյուդովիկոսը դատի հանձնվի... Լյուդովիկոս XVI-ի վոճրագործությունը ապացուցված է: Թագավորը պետք է հրաժարվի գահից»:

Մինչդեռ ժողովուրդն այդ պահանջն եր առաջադրում՝ Հիմնադիր Ժողովը մի դեկրետով Թագավորին անմեղ հայտարարեց սահմանադրության օրենքների համաձայն: Ժողովրդի այս պահանջին բուրժուազիան պատասխանեց զենքով: Մարսյան դաշտում Լաֆայետը հանդես յեկավ իր գվարդիայով և կրակ բացեց Ժողովրդի վրա: Մարսյան դաշտում արյուն թափվեց. սրանով սկսվեց քաղաքացիական պատերազմը: Առաջին անգամ բուրժուազիան հանդես յեկավ հեղափոխական Ժողովրդի դեմ, զենքը ձեռքին, վորով հեղափոխական ճակատը միանգամից խորտակվեց: Մարսյան դաշտի դեպքը խորացրեց և արագացրեց հեղափոխությունը:

Սահմանադրական օրենքների համաձայն Հիմնադիր Ժողովը պետք է վերջացրած համարեր իր աշխատանքները և տեղը զիջեր մի նոր օրգանի՝ Որենսդիր Ժողովին: 1791 թ. հոկտեմբերի 1-ին բացվեց Որենսդիր Ժողովը: Որենսդիր Ժողովի աշխատանքները պետք լինեին իրագործել Հիմնադիր Ժողովի վորոշումները և 1791 թ. սահմանադրությունը: Նա հավաքվեց այն ժամանակ, յերբ զարգանում եյին հեղափոխական շարժումները, տեղի ունեցավ Թագավորի փախուստը և Մարսյան դաշտի սպանդը՝ այսինքն նա սկսեց աշխատել այն ժամանակ, յերբ սկսվեց բուրժուական ռեակցիան: Այս ետապում բուրժուազիան իսկապես դիմեց հարձակման հեղափոխական մասսաների դեմ: Այս մթնոլորտում Որենսդիր Ժողովի աշխատանքները չեյին կարող այս ռեակցիայի ազդեցությունը չկրել:

Ըստ Հիմնադիր Ժողովի վորոշման՝ վոչ մի պատգամավոր չեր կարող ընտրվել Որենսդիր Ժողովի անդամ: Ընտրությունները տեղի ունեցան ռեակցիայի եղանակում, դրա համար էլ Ժողովի պատգամավորներ ընտրվեցին բուրժուական ինտելիգենցիայի առաջնորդները՝ գրողները, իրավաբանները, Ժուռնալիստները և այլն: Այդ պատգամավորները մեծ մասամբ կրթված եյին XVIII դարի լուսավորիչների գաղափարով: Նրանք այն ժամանակվա ամենակրթված և լուսավորված մարդիկն եյին: Նրանց նպատակն եր իրականացնել բուրժուական արիստոկրատիայի դեմոկրատիան: Որենսդիր Ժողովը իր այսպիսի կազմով համենայն դեպս ավելի

դեմոկրատիկ և ձախ սահմանադրական կազմ ուներ, քան Հիմնադիր ժողովը: Օրենսդիր ժողովում ծայրահեղ աջերը բացակայում էին, այսինքն անսահման միապետության կողմնակիցները: Ամենաաջ խմբավորումը, այսպես կոչված չափավորներն էին, որ ֆելյաններ էին կոչվում, որոնք ձգտում էին թագավորական իշխանությունը թողնել 1791 թ. կոնստիտուցիայի սահմաններում: Այս խմբավորման բազան էր ֆինանսական և արդյունաբերական խոշոր բուրժուազիան: Ֆելյանները ժողովում ունեյին 160 պատգամավոր: Կենտրոնը կազմում էր մոտ 300 պատգամավոր, որոնք շատ հաճախ ֆելյանների կողմն էին անցնում: Սրանք նույն բուրժուազիայի ֆրակցիան էին կազմում, որ խոշոր սպեկուլյանտների, ֆինանսիստների և կալվածատերերի կազմակերպությունն էր: Ձախ թևը կազմում էին ժակոբինները, որոնք իրենց մեջ ընդգրկում էին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ամենահեղափոխական և պրոգրեսիվ թևը, ապա ժիրոնդիստներին և մանր բուրժուական ինտելիգենցիային: Դեպքերի զարգացման հետևանքով ժակոբինները հետագայում բաժանվեցին յերկու խմբի՝ ժիրոնդիստների և մոնտանյարների: Ժակոբինները իրենց հեղափոխության ներկայացուցիչներն ու պաշտպաններն էին համարում և կարողացել էին իրենց շուրջը համախմբել Փարիզի հեղափոխական բնակչության աչքի ընկնող մասը: Ժիրոնդիստները ձևակերպվեցին Օրենսդիր ժողովում նստած ձախ թևից, որից ավելի ձախ էր Ռոբեսպիերը: Այս խմբավորումը կենտրոնացավ Ժակոբինների ակումբում: Շուտով պարզվեց, որ ակումբում տեսակետների խիստ տարբերություն գոյություն ունի, ակումբը ճիշտ է, ազատագրվել էր Լաֆայետից և նրա հետևորդներից, բայց և այնպես այնտեղ դեռ միասին աշխատում էին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները, արիստոկրատ և մանր բուրժուական ինտելիգենցիան և բանվորական թաղամասի ներկայացուցիչները: Այսպիսի խայտաբղետ կազմով ակումբը չէր կարող լուրջ տարաձայնություններ չունենալ: Պարզվեց, որ յերկու աչքի ընկնող տեսակետներ գոյություն ունեն, որոնք վերջիվերջո համախմբվեցին Ժիրոնդի դեպարտամենտից ընտրված պատգամավորների շուրջը, որոնք շատ շուտով դուրս յեկան ակումբից և կատաղի հակառակորդ դարձան ժակոբիններին և մյուս կողմից համախմբվեցին ժակոբինների ակումբի ամենաաչքի ընկնող մի անդամի շուրջը՝ Ռոբեսպիերի, որը շատ շուտով հեղափոխական մասսաների առաջնորդը դարձավ: Այսպիսով ժակոբինների ակումբը բյուրեղանալով և ազատվելով աջ տարրերից՝ դարձավ ամենադեմոկրատիկ շերտերի քաղաքական կազմակերպությունը:



Ժակոբինների ակումբը պաշտպանում էին Փարիզի բանվորական սեկցիաները: Նրանց ներկայացուցիչները հանդես էին գալիս այնտեղ և այս կամ այն պահանջը, ռեֆորմը և տեսակետը առաջադրում: Այնտեղ հանդես էին գալիս իրենց կրակոտ ճառերով Ռոբեսպիերը, Մարատը, Սեն-Ժյուստը, Դեմուլենը և այլն: Այդ ակումբը մեծ ազդեցություն էր գործում կառավարության, ժողովի և ընդհանրապես բուրժուազիայի վրա: Նրա արմատական լոզունգները և տեսակետները վոգևորում էին ժողովրդական մասսաներին թե Ֆրանսիայում և թե Յեվրոպայում ու վախեցնում, վրդովեցնում և անհանգստացնում հեղափոխության բոլոր թշնամի ուժերին, մինչև իսկ բուրժուազիան: Ժիրոնդիստների առաջնորդները՝ Բրիսոն, փիլիսոփա Կոնդորսեն, Բառնավը և ուրիշները հռչակավոր հռետորներ էին, բարձր կրթություն ստացած և դաստիարակված լուսավորիչների մտքերով: Ժակոբինների ղեկավարները՝ Դանտոնը, Ռոբեսպիերը, նույնպես բարձր կրթություն ունեյին և համակված լուսավորիչների ավելի արմատական մտքերով: Նրանց մյուս աչքի ընկնող անդամները՝ Մարատը, Սեն-Ժյուստը, Դեմուլենը, կրտսեր Ռոբեսպիերն և այլն, ավելի շատ ժողովրդական հռետորներ էին և լավագույն գործիչներ և մասսաների կազմակերպիչներ: Առաջինները՝ ժիրոնդիստները՝ արտահայտում էին առևտրա-արդյունաբերական գործոնյա բուրժուազիայի տեսակետները, վերջինները մանր-բուրժուազիայի, մեծ մասամբ նրա ինտելիգենցիայի և ունեվոր շերտի:

Օրենսդիր ժողովը չէր կարող պայքարի չանցնել հեղափոխական ուժերի դեմ: Նա միաժամանակ վախենում էր թագավորից, որ նա կարող էր ռեստավրացիա առաջ բերել: Այսպիսի պայմաններում ժողովը ձգտում էր թագավորին իր ազդեցության տակ պահել, չխորտակել թագավորական իշխանությունը, բայց օգտագործելով նրան կռվել հեղափոխական ուժերի դեմ: Օրենսդիր ժողովը ձգձգում էր իրագործել այն դեկրետը, որ ընդունել էր Հիմնադիր ժողովը: Գյուղացիությունը դժգոհ մնաց Հիմնադիր ժողովի քաղաքականությունից: Հողային հարցը չլուծվեց: Հողային ֆոնդը գնում էին սպեկուլյանտները, գործարանատերերը, այսինքն բուրժուան, գյուղացիությունը չէր կարող փրկանք վճարել, որովհետև նա շատ բարձր էր, իսկ Օրենսդիր ժողովը ավելի խճողեց այդ բոլորը:

Պակաս դժգոհ չէր քաղաքային բնակչությունը, որը տեսնում էր թե ինչպես հարստանում է բուրժուազիան: Անհրաժեշտ մթերքների գըները բարձրացնում էր առևտրականը, իսկ հացավաճառները ուղղակի կողոպտում էին բնակչությանը: Այն ինչ Օրենսդիր ժողովը հիմք ունենալով ազատ առևտրի սկզբունքը՝ չէր կամենում կանոնավորել գները

և շուկային հարաբերությունները: Մի շարք մթերքների կարիքը մեծ քաղաքներում շատ էր զգացվում՝ թեյ, շաքար, ընդհանրապես գաղութային ապրանքները մեծ դժվարությամբ էին քաղաքները հասնում: Հասնելու դեպքում էլ չափազանց բարձր գներ ունեյին: Ընչազուրկ մասսան չէր կարող գնել: Սպեկուլյանտների պահեստները և խանութները լիքն էին անհրաժեշտ մթերքներով, վորոնք սպասում էին հարմար մոմենտին ավելի թանկ գնով ծախելու համար: Փարիզի աղքատ բնակչությունը բողոքում էր, սպառնում, դիմումներ անում շուկան կանոնավորելու և սպեկուլյանտներին սանձահարելու համար: Իշխանությունը տեղից չէր շարժվում: Հուսահատված բնակչությունն այս կամ այն շրջանում հարձակումներ էին գործում այս կամ այն պահեստի, խանութի, հացավաճառի վրա և կողոպտում ունեցվածքը: Անկարգությունները աճում էին, դրությունը ծանրանում, հակահեղափոխությունը պատրաստվում էր, իսկ իշխանությունը անգործության էր մատնված: Խանութների առաջ մեծ հերթեր առաջ յեկան: Կանայք և յերեխաները կես գիշերին հերթի էին կանգնում: 1791 թ. ձմեռը չափազանց ծանր պայմաններում անցավ: Դրությունը լրջացավ և պատերազմի ուրվականը մոտեցավ Ֆրանսիային: Յեվրոպական ֆեոդալական պետությունները չեյին հաշտվում Ֆրանսիայի նման դրության հետ: Հեղափոխությունը շարժեց Յեվրոպայի բնակչությունը: Բոլոր նրանք, ովքեր դժգոհ էին հին կարգերից՝ բուրժուազիան, բանվորը, գյուղացին, արհեստավորը վողջունում էին հեղափոխությունը, իսկ ազնվա–կալվածատիրական դասը, հատկապես Գերմանիայում, Ավստրիայում անհանգստությամբ էր հետևում Ֆրանսիային:

Միաժամանակ Ֆրանսիայի նմանօրինակ դրությունից ուզում էին օգտվել մի շարք պետություններ: Անգլիան ցանկանում էր խեղդել բարձրացող Ֆրանսիային, գրավելով նրա գաղութները և դուրս շպրտել նրա ապրանքները մի շարք շուկաներից: Ռուսաստանը և Ավստրիան օգտվելով այդ խառը դրությունից ուզում էին գրավել Լեհաստանը, թուրքական հողամասերը և մինչև անգամ Ֆրանսիայի արևելյան սահմանները: Հեղափոխության ազդեցության տակ աշխուժացավ իտալական ժողովրդի ազգային – ազատագրական շարժումը, վորով մի նոր սպառնալիք էր առաջ գալիս Ավստրիայի համար: Շարժվեցին գերմանական և ավստրիական պրոգրեսիվ տարրերը, տեղի ունեցան յելույթներ և ապստամբություններ մի շարք յերկրներում: Յեվրոպական բուրժուազիան հանձին Ֆրանսիական հեղափոխության իր ազատագրման և հին կարգերի խորտակման ժամանակն էր տեսնում: Մյուս կողմից Յեվրոպայի հասարակական կարծիքը գրգռում և սրում էին Ֆրանսիայից փախած



ազնվականները, վորոնք կոչ էին անում ռեակցիոն կառավարություններին միացյալ ուժերով հարձակվելու Ֆրանսիայի վրա: Լյուդովիկոս XVI-ը շարունակում էր բանակցել պրուսական և ավստրիական թագավորների հետ և աղերսում էր «պատժել» Ֆրանսիան: Թագավորը յեվրոպական ռեակցիոն ուժերի աջակցությամբ ինտերվենցիա էր պատրաստում: Յեվրոպական մի շարք յերկրներում դեռ ֆեոդալական և կիսաճորտատիրական կարգեր գոյություն ունեյին, իսկ տիրող դասերը ազնվականությունն ու հոգևորականությունն էին: Վերջիններս հատկապես մեծ ձգտում էին հանդես բերում Ֆրանսիական հեղափոխությունը խորտակելու, վորով հեղափոխական շարժումների արմատները կտրած կլինեյին, իսկ իրենց յերկրներում անհաջողության մատնած կլինեյին պրոգրեսիվ տարրերի յելույթները: Այդ պատճառով այդ յերկրների ազնվականությունն և հոգևորականությունն իրենց կառավարություններին դեպի պատերազմն էին հրում Ֆրանսիայի դեմ: Անգլիան հակահեղափոխական բլոկի վոգին էր: Հեղափոխությունը իր դեմ զինեց Յեվրոպայի բոլոր ռեակցիոն ուժերին: Կազմակերպվեց Յեվրոպական մեծ պետությունների բլոկ Ֆրանսիայի դեմ:

1791 թ. դեկտեմբերին Լյուդովիկոս XVI-ը Պրուսական թագավորին գրեց, վոր խնդրում է զինված միջամտություն: Դեռ այդ նամակից առաջ, 1791 թ. օգոստոսին Ավստրիան և Պրուսիան մի մանիֆեստ հրատարակեցին, վորով դատապարտում էին հեղափոխությունը, հեղափոխության նվաճումները չեղյալ համարում և պահանջում էին թագավորին ազատություն տալ: Մյուս կողմից հեղափոխությունը բարձրացրեց և ուժեղացրեց Ֆրանսիային: Ֆեոդալական—կիսաճորտատիրական Ֆրանսիան դարձավ ուժեղ և ազդեցիկ պետություն: Ֆրանսիական բուրժուազիան գիտակցում էր իր ուժը, իր պատմական դերը, նա ձգտում էր նվաճողական եքսպանսիա: Ֆրանսիական բարձրացող բուրժուազիան Յեվրոպայի դեմ ռեվանշի յեր պատրաստվում: Մի ժամանակվա կտորտված բաժան—բաժան ֆեոդալական Ֆրանսիան կենտրոնացած և ազգովին ամբողջացած բուրժուական միապետություն դարձավ: 1756 թ. կնքած Ավստրո—Ֆրանսիական դաշնագիրը Ֆրանսիական կառավարությունը չեղյալ համարեց, նա ձգտում էր չեղյալ համարել նույնիսկ 1786 թ. կնքած Անգլո—Ֆրանսիական դաշինքը, վորն այնպես ճնշում էր Ֆրանսիայի առևտրական հզորությունը: Սա նշանակում էր, վոր Ֆրանսիան հանդես է գալիս վորպես սպառնալիք յեվրոպական պետությունների հանդեպ, հատկապես Անգլիան, վոր լավ բան չէր սպասում Ֆրանսիայի ուժեղացումից, վորը կարող է խոշոր մրցակից դառնալ իր տնտեսական հզորության ճանապարհին: Պատերազմի հարցը մեծ վիճաբանություններ հանդես բերեց Որենսդիր Ժողովում: Պատերազմի ուրվականը կախված էր

Ֆրանսիայի գլխին։ Անհրաժեշտ էր հարցը վճռել, սակայն կարծիքների տարբերություն կար։ Ֆել-աները ձգտում էին պատերազմի հրել Ֆրանսիային, վորից նրանք թագավորական իշխանության վերականգնումն էին սպասում։ Տարաձայնությունները ուժեղ էին ժակոբինների միջև։ Նրա աջ թևը՝ ժիրոնդիստները պատերազմ էին պահանջում, նպատակ ունենալով հեղափոխության զարգացումը կանգնեցնել, իշխանությունը գրավել և թագավորին իրենց յենթարկել։ Մյուս թևը՝ մոնտանյարները Ռոբեսպիերի ղեկավարությամբ պատերազմին դեմ էին. նրանք վախենում էին, վոր պատերազմը կուժեղացնի աջերին, թագավորին, վորոնք կօգտվեն հանգամանքից հեղափոխությունը խորտակելու համար։ Ժիրոնդիստները արտահայտում էին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ցանկությունը, վորը պատերազմից շատ բան էր սպասում, իսկ ժակոբինները արտահայտում էին մանր բուրժուական շերտերի ցանկությունները, վորոնք առաջին հերթին ներքին թշնամիների դեմ էին ուզում կռվել։

1792 թ. ապրիլի 20-ին ժողովը վերջապես վորոշեց պատերազմ հայտարարել Ավստրիային, վորով ժիրոնդը հաղթանակեց։ Այսպիսով Ֆրանսիան մտավ պատերազմական գործողությունների, սկզբում Ավստրիայի, հետո աստիճանաբար ամբողջ Յեվրոպայի դեմ։ Դեռ 1792 թ. մարտի 12—ին Լյուդովիկոս XVI—ը հրաժարեցրեց մինիստրական հին կազմը և ժիրոնդիստական մինիստրություն կազմեց, այս նշանակում է, պատերազմի ղեկավարության գործը և պատասխանատվությունը իր վրա վերցրեց ժիրոնդը։ Այդ ժամանակ Ֆրանսիական բանակը քայքայված դրության մեջ էր։ Բանակի բարձրաստիճան սպայության մեծ մասը փախել էր արտասահման, իսկ նորերը դեռ չէին նշանակվել։ Բանակը դեռ չէր վերակառուցվել, դիսցիպլինան թույլ էր, մանավանդ հեղափոխության ժամանակ։ Շարքային զինվորությունը չէր վստահում հին ազնվական սպայության։ Քաղաքներում կազմակերպված էր ազգային գվարդիան, սակայն նա հիմնական բանակի մասը չէր կազմում։ Քայքայման և անվստահության հետևանքով բանակը քանակապես նվազ էր և վորակով չափազանց թույլ։

Պատերազմական գործողությունների ժամանակ ֆրանսիական բանակը ցույց տվեց իր անմարտունակությունը և անկազմակերպությունը։ Հենց առաջին ընդհարման ժամանակ թշնամու հետ, ֆրանսիական զինվորները փախուստ դիմեցին։ Սկսվեց պարտությունների և նահանջի ժամանակը։ Ավստրիական զորքերը ներխուժեցին հեղափոխական Ֆրանսիայի սահմանները, վորով կրիզիսը ավելի ուժեղացավ։ 1792 թ. հուլիսի 11-ին Օրենսդիր ժողովը հայրենիքը վտանգի մեջ հայտարարեց։ Այս մոմենտին պարենավորման դրությունը ավելի վատացավ, սովը սաստկանում էր, իսկ սպեկուլյանտները չէին հրաժարվում իրենց կողոպտիչ գործարքներից։



## ԹԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ.

| Տարիներ | Բաց թողնված թղթադրամների քանակը | Մետաղային դրամի գնի կուրսը*) |
|---|---|---|
| 1/X—90 թ. | 400 միլիոն. | 91 % |
| 15/VI—91 թ. | 1040 » | 85 % |
| 1/X—91 թ. | 1200 » | 74 % |
| 15/XII—1791 թ. | 1300 » | 77 % |
| 1/IV—1792 թ. | 1000 » | 68 % |
| 1/V—1792 թ. | 1650 » | 58 % |
| 15/VI—1782 թ. | 1700 » | 57 % |
| 1/VIII—1792 թ. | 1800 » | 61 % |
| 25/X—1792 թ. | 2000 » | 71 % |
| 1/II—1793 թ. | 2400 » | 52 % |
| 5/V—1793 թ. | 3100 » | 52 % |

Այս աղյուսակը շատ պարզորոշ կերպով ցույց է տալիս թանկության դինամիկան։ Մետաղային դրամի հետ համեմատած թղթադրամների կուրսը կատաստրոֆիկ անկում է ապրում, վորով թղթադրամները կորցնում են իրենց արժեքը, վորի պատճառով շուկայում դրամական կրիզիս առաջ յեկավ։ Հացի գինը նույնպես բարձրանում էր, վորը հատկապես մեծ դժգոհություն էր առաջ բերում բնակչության մեջ։

Հետևյալ տախտակը շատ պարզ ցույց է տալիս այդ։

## ՀԱՑԻ ԳԻՆԸ
## (ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ՅՈՆՆՈՒՄ)

| ՏԱՐԻՆԵՐ | Ոսկեղենյան չափով 60 ֆունտ հացի գինը | |
|---|---|---|
| 1777 թ. | 4 լիվր | |
| 1778 թ. | 8 » | |
| 1789 թ. | 9 » | |
| 1792 թ. վերջին | 10 » | |
| 1795 թ. ապ. մայիս. | 12 » | |

*) Կուրսը վերցված է ամսվա սկզբից։

Այս դեպարտամենտի որինակի վրա կարելի յե ցույց տալ, թե ինչ չափով եր բարձրանում հացի գինը: Մանավանդ պատերազմի տարիներին առևտրականները ջանք չեյին խնայում մեծ կապիտալներ դիզել հացի սպեկուլյացիայի միջոցով: Կատաստրոֆիկ կերպով ընկնում եր նաև թղթադրամի կուրսը: Թղթադրամների կուրսը մանավանդ արագությամբ անկման եր հասնում: Ամեն տարի շուկա յեր դուրս բերվում մեծ քանակությամբ թղթադրամ: Այսպես 1790 թ. սեպտեմբերի 25-ի դեկրետի համաձայն 1200 միլիոն բաց թողնվեց, 1791 թ. մայիսին 600 միլիոն, 1791 թ. դեկտեմբերին 300 միլիոն թղթադրամ բաց թողնվեց: 1792 թ. ապրիլին 300 միլիոն, այսինքն մեկ ու կես տարվա ընթացքում 2.500 միլիոն թղթադրամ բաց թողնվեց: 1792 թ. մարտին 350 միլիոն նորից գանձարկղը մտավ, կառավարությունը փորձեց այրել: 1792 թ. թղթադրամը Փարիզում իր մինիմալ արժեքի 44 տոկոսը կորցրեց, իսկ Ֆրանսիայից դուրս Ժընեվում, Համբուրգում, Լոնդոնում և Ամստերդամում կորցրեց 50—60 տոկոս (Ա. Մատյեզ):

Այս յերևույթը գրգռում եր բնակչությանը և վոտքի հանում նրանց կառավարության դեմ: Մարատը և ուրիշները պնդում եյին վոր ներքին եմիգրացիա, կոլլենց կա, վորի դեմ առաջին հերթին պետք ե պատերազմ հայտարարել: Շատերը պնդում եյին, վոր ժամանակն ե ներքին հակահեղափոխությանը խեղդամահ անել: Ռազմաճակատ գնացող զորքը վստահ չեր թիկունքի նկատմամբ, նա պահանջում եր ներքին կոլլենցը յենթարկել լիկվիդացիայի, հետո ճակատ մեկնել: Թանկության աճումը, անհաջողությունները ճակատում և պտտվող համառ լուրերը, թե՝ թագավորը շարունակում ե իր հակաժողովրդական քաղաքականությունը, վարկաբեկ արին Լաֆայետին, Միրաբոյին, ժիրոնդիստական կառավարությանը: Ժողովները, միտինգները, գրգռիչ ճառերը ամենաուժեղ աստիճանի հասան: Մարատը ավելի սուր լեզու սկսեց բանեցնել կառավարության և թագավորի հասցեյին: Ժակոբինների ակումբն անընդհատ աշխատում եր: Նրա դերն ավելի մեծացավ:

Պարտությունները ճակատում ամբողջ Ֆրանսիան վոտքի հանեցին: Փարիզի 48 թաղամասերը (սեկցիաները) անցան անընդհատ աշխատանքի: Որենսդիր ժողովը ոգոստոսի 1—ին թույլատրեց զենք բաժանել ժողովրդին: Նա ցանկանում եր թշնամու զորքերի առաջխաղացումը կանգնեցնել, ճակատ ուղարկելով թարմ ուժեր: Ժողովուրդը կամովին զինվում եր և պահանջում եր Փարիզի շուրջը բանակ կազմել, պատրաստել և աստիճանաբար ճակատ ուղարկել: Որենսդիր ժողովը վախենում եր նման ձեռնարկումներից: Համաձայնվել կնշանակեր զինել հեղափոխական բնակչությունը և իր դեմ ունենալ զինված հեղափոխական բանակ: Բայց մասսաների ճնշման տակ նա համաձայնվեց 25 հազարանոց բանակ կազմակերպել Փարիզի շուրջը, բայց թագավորը մերժեց դեկրետը ստորագրել:

Հունիսի 20—ին ժիրոնդիստները ժողովրդական ցույց կազմակերպեցին, վորով ուզում եյին թագավորին ստիպել դեկրետն ստորագրելու: Սակայն այդ ցույցը ժիրոնդիստների համար լավ բան ցույց չտվեց: Հունիսի 20—ի ցույցը ապացուցեց, վոր գոյություն ունի կազմակերպված և հեղափոխական մասսա և վորն այնքան ուժեղ եր ու գիտակից, վորին հաշվի չառնել չի կարելի: Յերբ ժողովուրդը ցույցի որը հարձակվեց թագավորի պալատի վրա, ժիրոնդիստները հանդես յեկան, վորպես թագավորի պաշտպաններ, վորով նրանք իրենց միանգամայն դիսկրեդիտացիայի յենթարկեցին:

Պարտությունները շարունակվում եյին, թագավորը պատրաստվել եր հակահեղափոխություն առաջ բերելու: Պարզ եր վոր վոչ վոք չեր կարող հավատալ վոչ կառավարությանը և վոչ-ել թագավորին, գրությունը ավելի բարդացավ, յերբ թշնամի ուժերի ընդհանուր հրամանատար հերցոգ Բրաունշվեյգը հուլիսի 25—ին մի մանիֆեստ հրատարակեց, վորով սպառնում եր Ֆրանսիայի հեղափոխությունը խորտակել և թագավորին վերադարձնել իր իրավունքները:

Այդ ծանր ժամանակամիջոցում Փարիզի բնակչությունն ամբողջությամբ կողմնորոշվել եր: Հակահեղափոխականները, ռոյալիստները, բուրժուազիան, համախմբվել եյին թագավորի շուրջը և Որենսդիր ժողովում: Նրանք պատրաստվում եյին հեղափոխությունը ճնշել: Ծայրահեղ ձախերը համախմբված եյին սեկցիաներում: Ամեն մի սեկցիա ուներ իր զինված ուժը, ազգային գվարդիան և ինքնավարական, մունիցիպալ կազմակերպությունը, իսկ ամբողջ Փարիզը ղեկավարում եր կոմունայով և քաղաքապետով: Փարիզի մունիցիպալիտետը կամ կոմունան այդ ժամանակ չափավորների ձեռին եր գտնվում, դրա համար ել սեկցիաների դերն ավելի մեծացավ: Փարիզի կոմունան պաշտպանում եր բուրժուական ազգային գվարդիան, վոր համախմբված եր բուրժուական սեկցիաներում: Փարիզի սեկցիաների մեծ մասը հեղափոխության կողմն եյին: Նրանք կասկածով և անվստահությամբ եյին վերաբերվում Փարիզի կոմունային, միաժամանակ ձգտելով կամ գրավել կոմունան, կամ այնպիսի պայմանների մեջ

գնել, վոր նա ամեն կողմից շրջապատվի սեկցիաներով և դրանով չեզոքացնի նրա ղեկավարությունը: Բայլին և Պետիոնը ամեն կերպ ձգտում եյին սեկցիաները իրենց յենթարկել և այդպիսով թուլացնել նրանց դերը Փարիզի կազմակերպման գործում:

Բուրժուազիան վախենում եր հին կարգերի կողմնակիցներից, մանավորապես տարագիրներից, բայց նա պակաս չեր վախենում հեղափոխական ժողովրդից: Վորքան նա ուժեղ չափով կռվում եր հակահեղափոխության դեմ Հիմնադիր ժողովի շրջանում, այնքան նա թուլացրեց իր պայքարը նրանց դեմ, յերբ տեսավ Փարիզի սեկցիաների համառ պատրաստությունը, նրանց դերի մեծացումը և հեղափոխական շարժումների ծավալումը: Բուրժուազիան 1791 թ. նոյեմբերի 9-ին մի դեկրետ հրատարակեց, վոր ուղղված եր տարագիրներին դեմ: Դեկրետը Ֆրանսիայից փախածներին համարում ե հայրենիքի թշնամիներ և առաջարկում ե վերադառնալ: Չվերադարձողների սեփականությունը կոնֆիսկացիայի յե յենթարկվում, նրանց դատելու համար հատուկ դատարան ե կազմակերպվում, իսկ նրանք, վորոնք տարագիրների համար ռազմական ուժ կհավաքեն, կյենթարկվեն մահվան պատժի: Մենք տեսնում ենք վոր ժողովը վճռական միջոցների յե դիմում տարագիրներին վոչնչացնելու համար, սակայն վոչ այնքան իր անկեղծության պատճառով, վորքան Փարիզի հեղափոխական մասսաների ճնշման հետեվանքով:

Սակայն տարագիրների դեմ այդ պայքարը բուրժուազիան թուլացրեց, յերբ տեսավ վերահաս վտանգը հեղափոխական ճակատի կողմից: Միրաբոն և Լաֆայետն առաջին հերթին լքեցին իրենց դիրքերը և անցան թագավորի կողմը: Թագավորը Լաֆայետին ծառայության ընդունեց և բարձր աշխատավարձ նշանակեց: Ժողովուրդը Միրաբոյին և Լաֆայետին դավաճաններ համարեց: Սրանց հակահեղափոխության կողմը անցնելը նշանակում եր, վոր բուրժուազիան, նրա արիստոկրատ մասը նույնպես իր դիրքը վորոշեց թագավորին պաշտպանելու խնդրում, վորի արմատները գալիս եյին Մարսյան դաշտի սպանդից և հունիսի 20—ի ժիրոնդիստական ցույցից: Այսուհետև բուրժուազիան իր ուշադրության մեծ մասը ուղղեց հեղափոխական ուժերի կողմը, վորոնց իր ամենամեծ թշնամին եր համարում:

Այս հողի վրա են զարգանում դեպքերը: Սովը, գների բարձրացումը, առևտրականների հափշտողական քաղաքականությունը, թագավորի դավաճանական խաղերը, կառավարության կասկածելի և անգործունյա դիրքը, Միրաբոյի և Լաֆայետի դավաճանական դերը և թշնամի ուժերի առաջխաղացումը Ֆրանսիայի սահմանները ու հակահեղափոխական ուժերի աշխուժացումը, զինումը և պատրաստության-



ները հեղափոխության դեմ վոտքի հանեցին Փարիզի հեղափոխական սեկցիաներին: 1792 թ. օգոստոսի 10—ին Փարիզի հեղափոխական մասսան ապստամբվեց և կործանեց թագավորական—միապետական և բուրժուական արիստոկրատիայի իշխանությունը:

---

## ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1789 թ. մայիսի 5-ից մինչև 1792 թ. օգոստոսի 10-ը բուրժուական արիստոկրատիայի գերիշխանության եպոխան:

1789 թ. հուլիսի 14-ին Բաստիլի գրավումը.

1791 թ.—ընդունվեց Սահմանադրական-միապետական կոնստիտուցիան.

1791 թ. հուլիսի 14-ին—Հիմնադիր ժողովն ընդունեց Լը-Շապելյեյի հակաբանվորական օրենագիծը.

1792 թ. ապրիլի 20-ին—պատերազմ Ավստրիայի դեմ.

1972 թ. օգոստոսի 10-ին—հեղափոխությունը Փարիզում.

## Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ.—«Քրիստոմատիա», հատոր I. եջ 96–133.
2. ՀՅՈՒԳՈ.—«1793» - Վեպ.
3. Ц. Фридлянд.—«История Западной Европы» ч. I. կամ
4. Н. Лукин.—«Новейшая История Запад. Европы».
5. Ц. Фридлянд и Л. Слуцкий.—«История Революционного движения Западной Европы», ч. I. стр. 109—145.
6. Г. Купов.—«Борьба Классов».

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Արևմտյան Եվրոպայի XIX—XX դարերի պատմության»
№ 1 և 2 առաջադրությունների

№ 1 առաջադրություն

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 3 | 17 | Նորագույն պատմության | Նորագույն պատմության մեջ |
| 22 | 1 | Այս լոմեր | Այս ցանկապատումը վաղուց էր սկսված, բայց կառավարությունը արգելում էր. |
| 23 | 18 | Վոր ուրենքն ինքը | վոր «որենքն ինքը |
| 24 | 36 | բարակ | արագ |
| 26 | 11 | ձեռնարկությունները | ձեռնարկությունը |
| 28 | 11 | Լեգալինի | Լիգաի |

№ 2 առաջադրություն

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 4 | 34 | հին, սրբազան կարգե- րի պաշտպանություն. թե | հին, սրբազան կարգերի, պաշտպանություն, թե |
| 5 | 35 | կոնտիգենտի | կոնտինենտի |
| 6 | 30 | տեսակեանները | տեսակները |
| 9 | 12 | ծախսերի մի մեծ մասը | ծախսերի մի մասը |
| 23 | 26 | կոնտակտ | կոմպակտ |
| 32 | 9 | յեթե Ֆրանսիական | յեթե Ֆինանսական |
| 37 | 18 | իրական | իրավական |
| 38 | 37 | փորձն ու պատկերը | փորձն ու դասերը |
| 44 | | պատակտոնությունները | պարտականությունները |
| 48 | 11 | Նոր դասակարգի | Նոր հասարակարգի |
| 48 | 23 | Շատոբրյան | Շատրյան |



ՀՀ Ազգային գրադարան
NL0945945

-50-
1931
И92
2857